This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

Digitized by Google

2828 Abichean Sigram 301

ՊԱՏԿԵՐ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՍ

ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ Ի Ս. ԳՐՈՑ

Ի ԵՒՐՊ. ԱԲԵՂԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԺԱՊԵՏ ԱՌԻԿԵԱՆ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ

51 р.

Գրադարան Ամերիկայի 2828

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԱՅ
Տ. Տ. ՄԱԿԱՐ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ
Տ. ԾԱՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ԽՈՐԷՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ ԱԶՆԻՒ ԲԱՐԵՐԱՐԱՅՆ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ

ԶԱՒԵՐԱՅՄԱՄԲ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՅ
ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԿԹՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ

ԶՄԻՒՌՆԻԱ.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒՐԵԱՆ
1888

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
Digitized by Google

Պատուելի Պ. Ստեփան Աբիկեան սոյն Պարկեր Աստուածաշունչ Մ. Եկեղեցոյ Հայաստանեայց՝ անուն իւր տետրակն Զմիւռնիոյ Կրօնական Ժողովոյս ներկայացնելով, զկնի քննութեան, արժան դատուեցաւ վաւերացնել զայն:

Ի 27 մայիս 1888
Ի Զմիւռնիա

ԿՆՔ.
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Digitized by Google

Ասկէ յառաջ տետրակ մը տպած եմ*
Գատկեր անունով պատկերացուցած,
Զևերը յայտնի նշանակած եմ
Հայ Եկեղեցին քիչ մը մեծարած։

Ամենուն արդ սիրով կը հրաւիրեմ
Անաչառ մտքի՞զայս ըլլան քննած,
Թէ որ ճիշտ գտնեն համաձայն անդէմ
Ըստ այսմ ապրին չէ թէ խոտորած։

Զըլլայ որ խաբուիք, ինչ որ գրած եմ
Ես ալ մարդ մի եմ մեղքէ սխալած,
Բացէք գիրքերը քննութեամբ կրսեմ
Բերիացւոց սէջ աղնիւ անուանած։

*Ճիշտ Տետրակս նոքեն կը տպեմ
Զոյն լաւ կարգալով լինիք համոզուած,
Ներեցէք սիրով ինձի կաղաչեմ
Քանզի իմ կենացս ժամերն եմ զոհած։

Digitized by Google

Հին Կտակարանով՝ մեղաց դատապարտութենէ ազատելու համար պարտաւոր էին մարդիկ, Մովսէսի ձեռք տրուած Տասնաբանեայ օրինաց ամբողջութիւնը անթերի կատարելով վայելեն Աստուծոյ օրհնութիւնը, Բ. Օրինաց ԻԷ. 26։

Նոր Կտակարանով՝ մեղաց դատապարտութենէ ազատելու համար պարտաւոր են մարդիկ, Յիսուսի Քրիստոսի չնորհք տրուած հաւատոյ և սիրոյ հնազանդութիւնը կատարելով վայելեն Աստուծոյ օրհնութիւնը, Հռովմ. Ե. 19–21։ Առաք. Յովհ. Ա. 17։

Digitized by Google

ՆԱԽԱԲԱՆ

Լոյս Փառաւոր Աւետարանին Քրիստոսի. Բ. Կորնթ. Դ. 4։

Բայց հիմա յայտնուեցաւ երևամբը Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով խափանեց մահը՝ և հանեց ի լոյս կեանքը՝ և Աւետարանին միջոցաւ անմահութիւնը։ Բ. Տիմոթ. Ա. 10։

Աւետարանը՝ անթիւ շնորհքներ մեր երկրաւոր կեանքին վրայ կը տարածէ, անէ՝ որ մեզ երկնաւոր հօր սիրոյ գթութեանը կը խոնարհեցնէ, անէ՝ որ մեզ մեղաւորաց բարեկամ եղող հեզ ու խոնարհ Փրկչին ողորմութեանը կը մօտեցնէ, անէ՝ որ մեզ Սուրբ Հոգւոյն շնորհաբուխ պարգևացը կ՚արժանացնէ, անէ՝ որ մեզ սիրել մեր թշնամիները՝ օրհնել մեզ անիծողները կը վարժեցնէ, անէ՝ որ մեզ ատողաց բարերարել, չարչարողաց և հալածչաց ներել կ՚ուսուցանէ, անէ՝ որ մեզ հին մարդը մերկանալով նորազարդեալ կը հագուեցնէ, անէ՝ որ մեզ դէպի երկնային խորհրդածութիւն կը բարձրացնէ, անէ՝ որ մեզ երկինքը գրուած անդրանկաց ժողովքին կ՚ընկերացնէ, անէ՝ որ մեզ երանական դպրոցին դասերովը վարժեցուցած Քրիստոսի կ՚աշակերտէ, անէ՝ որ մեզ սիրոյ պարտքերով սիրոյ Հեղինակին սիրոյ օղակէն անցնելով կը կապէ, անէ՝ որ մեզ հաւատոյ՝ յուսոյ՝ և սիրոյ շնորհաց խոստումներովը կ՚ամրապնդէ. ի մի բան՝ Աւետարանը պատկեր է աներևութին Աստուծոյ. ահ քանի՜ և քանի՜ երանութեան խոստումներ կան մրցմամբ ի կէտ կոչման այն կատարելութեան նպատակին վաղողներուն համար, երանի՜ էր որ մենք ալ արժանանայինք սոյն շնորհացը, երանի՜ էր դպրոցներու և տուներու մէջ կարդացուելու առաջին անուշ գիրքը սոյն փառաւոր Աւետարանը ըլլար, երանի՜ էր մեր սրտեր և մեր խորհուրդներ նորա

Digitized by Google

դատարան ըլլային, այն ատեն մարդիկս այս աքառաուաց ձորին մէջ խաղաղութեան օրհնութիւնը պիտի վայելէ-ինք վիշտերու մէջ մխիթարուած, հոգւով ուրախացած, ծերութեան մէջ ամրացած, մահուան մէջ յուսացած, և վերջն ալ յաւերժական երանիկ և երջանիկ ժառանգութիւն ի յերկինս անվիճաբան արդարութեամբ վայելելն։ Երանի էր որ մեծ ուրախութիւն մի ըլլար երկինքը՝ մեզ մեղաւորաց համար շնորհիւ փառաւոր Աւետարանին ապաշաւած ի սրտէ գալ ի հնազանդութիւն Աւետարանին պատուիրանաց. քանզի Աւետարանը՝ է անգին մարգարիտը՝ անապառ դանձը՝ յորդահոս ջրհորը՝ անխզելի կապը՝ միութեան կեդրոնը՝ արդարութեան հայելին՝ Աստուծոյ պատկերը՝ հօրը բանը՝ հոգւոյն ձիրքը՝ երկնից ճանապարհը, անյաղթելի դուռը, հաստատութեան վէմը, պաղատու որթը, հրաւէր մոլորելոց առ բարի հովիւը, կենաց հացը, ինչու որ իւր մէջ՝ յաւերժական և անեղը երանութիւնը դրոշմուած ունի։

Երանի սոյն դիրքը ունեցողին, եւ երանի կարդացողին, եւ եւս երանի զայն իրեն ուղեցոյց բռնելով, ըստ այնմ արդարութեամբ և իրական արդեամբ նորածնեալ կենօք հնազանդած ապրողին։

Ի սկզբանէ էր բանն՝ Քրիստոս եւ խօսք՝ է նոյն բանն Յովհ. Ա. 1։

Տէս երանի կայ անոնց՝ որոնք ի Տէր ննջեցին
Հոս յաղթութիւն կատարած՝ հոն սուրբ պսակը առին,
Ունցիր և դու զայս նախանձ՝ ով մեղաւոր շուարած
Քեզի ալ կայ շնորհաց՝ սուրբ պսակը անկասկած

Digitized by Google

ՊԱՏԿԵՐ

ՀԱՐՑ՝ ԸՆԴ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ

Քննեցէք զգիրս Յովհ. Ե. 39։

Հ. Նիւթական եկեղեցւոյ անունը՞։
Պ. Տուն Աստուծոյ, Մատթ. ԺԲ. 4։
Տուն աղօթից, Մատթ. ԻԱ. 13։
Տաճար, Գործ. Բ. 46։*

Հ. Զինուորական եկեղեցւոյ անունը՞։
Պ. Եկեղեցի Աստուծոյ, Ա. Կորնթ. Ա. 2. ԺԱ. 22։
Եկեղեցի Քրիստոսի, Հռովմ. ԺԶ. 16։

Հ. Տեղական անունը՞։
Պ. Քաղքին անուամբը,
Եփեսացւոց եկեղեցի Յայտ. Բ. 1։
Զմիւռնացւոց եկեղեցի Յայտ. Բ. 8։
Պերկամոյ եկեղեցի Յայտ. Բ. 12. Նաև այլոց։

Հ. Հաւատացելոյն անունը՞։
Պ. Աշակերտ, Մատթ. ԻԸ. 10։ Գործ. Զ. 7։
Քրիստոնեայ, Գործ. ԺԱ. 26, » ԻԶ, 28։ Ա. Պետր. Դ. 16։

Հ. Ցարանուանական անունը՞։
Պ. Է մարմնաւորութիւն չէ հոգևորութիւն Պօղոսեան՝ Ա. Պօղոսեան՝ և կերպական ըսուիլը, Ա. Կորր. Ա. 12–13 Գ. 3–4։ Հռովմ. Ը. 6։ Մատթ. ԺԲ. 25։

Հ. Մեղաց ապաշխարութիւնը՞
Պ. Է գղջալ սրտով և հնազանդիլ Աստուծոյ, Մարկ. Ա. 15։ Յակ. Դ. 7–10։

*Սուրբերու անունով կառուցուած եկեղեցիներն և նոցա տօներն, է Դանդ իւզաթափ կնոջն է յիշատակի, Մ-դ. ԻԶ. 13։

Digitized by Google

Հ. Մկրտութեան նպատակը՞։

Պ. Է սրտով հաւատալ և բերանով խոստովանիլ զՔրիստոս Յիսուս փրկիչ աշխարհի, սրբիլ ի ակզբնական մեղաց և զպարգևս Հոգւոյն ընդունիլ։ Հռովմ. Ժ. 9–10։ Մարկ. ԺԶ 16։ Յովհ. Զ. 47։ Գործ.Բ. 38–41։ Մատթ. Ժ. 32։ Գործ. ԺԹ. 5–6։ ԻԲ. 16։ Յովհ. Ա. 12։ Եփեսացի Ե. 26։ Ա. Պետր. Գ. 21։ Տիտոս։ Գ. 5։ Ա. Կորնթ. ԺԲ. 13։ Հռովմ. Ե. 12։ Է և երաշխաւորեալ։

Հ. Նիւթը՞։

Պ. Ջուր, Յովհ. Գ. 23։ Գործ. Ը. 38. Ժ. 47։

Հ. Կերպը՞։

Պ. Թաղմամբ, Կողոս. Բ. 12։ Հռովմ. Զ. 3–23։

Հ. Հոգւոյն սրբոյ պարգևը՞։

Պ. Կայ տրուած հրաշիւք նախ քան զմկրտութիւն, Գործ. Ժ. 47։ Կայ և տրուած հաւատքով մկրտութենէ ետքը, Գործ. Ը. 16–17։

Հ. Խօսքը՞։

Պ. Յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ, Մատթ. ԻԸ. 19։ Ա. Յովհ. Ե. 7։

Հ. Հաղորդութեան նպատակը՞։

Պ. Է յիշատակի՝ և է քաւութիւն և թողութիւն մեղաց, Ղուկ. ԻԲ. 19–20։ Ա. Կորնթ. ԺԱ. 23–26։ Ժ. 16։ Յովհ. Զ. 52–64։ Մատթ. ԻԶ. 26–29։ Խորհրդատետր, ԺԳ։

Հ. Հաղորդութեան տեսանելի նիւթը՞։

Պ. Հաց և գինի, Մատթ. ԻԶ. 26–30։

Հ. Օրհնութեան երգը՞։ Մարկ. ԺԴ. 26։

Պ. Զբաժակ Տեառն ընտ'ալայց և զանուն Տեառն կարդասցս։ — Սաղմ. ՃԺԶ. 13։

Հ. Հաղորդութեան օրը՞։

Պ. Ամեն օր, Գործ. Բ. 46։
Եւ միաշաբաթին Գործ. Ի. 7։

Հ. Արժանի ըլլալը՞

Պ. Փորձել իր անձը, Ա. Կորնթ. ԺԱ. 27–31։

Digitized by Google

Հ. Մեղայ խոստովանութիւնը՞։

Պ. Աստուծոյն առ Աստուած, Ա. Յովհ. Ա. 9–10։ Բ. 1–2։ Ղուկ. ԺԸ. 13։

Եւ մարդոյն առ մարդ, Մատթ. Զ. 14–15։ Է. 23–24։ Եփես. Դ. 32։ Խորհրդատեսը է։

Հ. Քանի՞ անգամ ներել։

Պ. Եօթանասուն անգամ եօթը, Մատթ. ԺԸ. 21–22։ Յովհ. Ի. 23։ Կողոս։ Գ. 13–14 Բ. Կորնթ. Բ. 7–8։

Եկեղեցին ալ ունի այս արտօնութիւնը, Մատթ. ԺԸ. 15–20։

Հ. Ամուսնութիւնը՞։

Պ. Ուխտով, Մատթ. ԺԹ. 5–6։

Խրատով, Եփես. Ե. 22–33։

Վկայութեամբ, Հռուբ. Դ. 10–11։

Օրհնութեամբ, Մենդց. Ա. 28։

Հ. Արձակումը՞։

Պ. Բաց ի յայտնեալ չնութենէ է արգիլեալ, Մատթ. ԺԹ. 9։

Հ. Եկեղեցւոյ պաշտօնը՞։

Պ. Աղօթել, Կողոս. Դ. 2. Ա. Կորնթ. Ժ. 31։ Հռովմ. ԺԲ. 12։

Կարդալ ի Սուրբ գրոց, Ղուկ. Դ. 17–20։ Եսայի. ԿԱ. 1–2։ Դոբծ. ԺԷ. 2–3։

Երգել հոգևորք, Եփես. Ե. 19–20։ Կողոս. Գ. 16։

Քարոզել Մատթ. ԻԸ. 20։ Բ. Տիմոթ. Դ. 2։

Հ. Աղօթքի ընդունելութիւնը՞։

Պ. Յիսուս Քրիստոսի անուամբ Յովհ. ԺԴ 13–13։

Միջնորդութեամբը. Ա. Տիմոթ. Բ. 5։

Բարեխօսութեամբը, Ա. Յովհ. Բ. 1–2 Հռովմ. Ը. 34։

Հ. Ի՞նչ կերպ հաւատքի պէտքը ունինք։

Պ. Սիրով յաջողեալ, Ա. Կորնթ. ԺԳ. 1–14։

Հ. Ի՞նչպէս պահել պետք է Կիրակին։

Պ. Սուրբ կենաց, Եղից. Ի. 8–10։ Եսայ. ԾԸ. 13–14։ Երեմ. ԺԷ. 21–27։ Յայտ. Ա. 10։

Հ. Ստիպել պէտք է՞ ի Սուրբ գիրս չնչանակեալ իրերը ընդունելու։

Digitized by Google

Գաղափարներ աղատ են, Հռովմ. ԺԴ. 2–10։

Սուրբերու մասին Ս. գրոց մէջ վասն բառին վրայ կրթ-նիլ կայ։ Եւ ղնորհօք բառն ալ ունի ամիսողջ իր իմաստը։ Զաքար. Ա. 12։ Եսայ. Լէ. 35. Յովհ. Ա. 16-17։

Հ. Քանի՞ մասնաւոր պաշտօնէութիւն կայ յեկեղեցիս։

Պ. Երկուք, երէց, որ է եպիսկոպոս, և սարկաւագ, Ա. Պետր. Ե. 1։ Ա. Տիմոթ. Գ. 1։ Տիտոս. Ա. 7։ Ա. Տիմոթ. Գ. 8։*

Հ. Երէցին պաշտօնը՞։

Պ. Եկեղեցւոյ թերութիւններն ուղղել, Տիտոս. Ա. 5–10։
Հօտը արածել, Ա. Պետր. Ե. 2–4։ Գործ. Ի. 28։
Սորվեցնել, Ա. Տիմոթ. Գ. 1–7։
Քարոզել, Բ. Տիմոթ. Դ. 2–5։
Մկրտել, Մատթ. ԻԸ. 19։
Հաղորդել, Ա. Կորնթ. Ժ. 16–17։

Հ. Սարկաւագին պաշտօնը՞։

Պ. Պաշտօնակցիլ հոգևորին, Գործ. Ը. 12–13–38։ Ա. Տիմոթ. Գ. 8–13։ Փիլիպ. Ա. 1։ Գործ. 1–7։

Հ. Ի՞նչ կերպով ի պաշտօն կը հրաւիրուին։

Պ. Պահօք՝ աղօթիւք՝ և ձեռնադրութեամբ, Գործ. ԺԴ. 22։ Ա. Տիմոթ. Դ. 14։ Բ. Տիմոթ. Ա. 6։

Հ. Հոգևոր պաշտօնէութեան մէջ հաւատացեալ եղբարք ունի՞ն տարբերութիւն մի։

Պ. Հաւասար եղբարք են և գործակիցք համայն Աւետարանի երկնատուր շնորհացը, քահանայ ու թագաւորներ են, Գործ. Ը. 4։ Ա. Պետր. Բ. 5–10։ Մատթ. Ե. 13–16։ Յովհ. ԺԷ. 20–21։

Հ. Ո՞ւր պէտք է դիմենք հաւատոյ և վարուց կանոնը ճշտիւ սորվելու։

Պ. Ի Ս. գիրս. որ է ճրագ լուսատու, Բ. Պետր. Ա. 19։ Բ. Տիմոթ. Գ. 15–17։ Գաղատ. Զ. 16։ Յովհ. Ե. 39. Գործ. ԺԷ. 11։

Հ. Բաց ի Սուրբ Գրոց պատգամներէն ուրիշ պատգամներ իբր Աստուածային ընդունելու պարտաւոր ենք։

Պ. Աւելցնելը պակսեցնելը նզովիւք կնքուած է, Գաղատ. Ա. 6–10։ Յայտ. ԻԲ. 18–20։ Բ. Օրինաց Դ. 2. ԺԲ. 32։

*Եպիսկոպոսութիւնը կը նշմարուի նախադաս քան զերէցութիւն։

Digitized by Google

Երանի՛ անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն Ղ-ա։ ԺԱ։ 28։

Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր մարդոց երևեցաւ որ մեզ խրատէ՝ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրինք այս աշխարհիս մէջ։ Տիտոս։ Բ։ 11–15։

Ուստի ապաշխարեցէք և դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին, որպէս զի սփոփանաց ժամանակները գան Տէրոջը երեսէն, Գործ։ ԺԳ։ 19–20։

Փորձեցէք ձեր անձերը թէ Է՞ք ի հաւատս, քննեցէք ձեր անձերը, չէ՞ք գիտէր ձեր անձերը որ Յիսուս Քրիստոս ի ձեզ է, միայն թէ խոտան չըլլաք։ Բ։ Կորնթ։ ԺԳ։ 5։

Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզ, ո՞վ որ կը լսէ իմ խօսքս և կը հաւատայ անոր որ ղրկեց զիս՝ յաւիտենական կեանք ունի, և դատապարտութեան տակ չկայնար, այլ անցած է ի մահուանէ ի կեանս։ Յովհ։ Ե։ 24։

Մի Միութիւն	Յովհ. ԺԷ։ 21։ 23
Մի Որդի Յս. Քս.	Ա։ Կորնթ. Ը։ 6։ Յովհ. Ա։ 18
Մի Սուրբ Հոգի	Եփես. Դ։ 4։ Ա։ Յովհ. Ե։ 7
Մի Աստուած	Ա։ Կորնթ. Ը։ 6։ Եփես. Դ։ 6
Մի Տէր	Մարկ։ ԺԲ։ 29։ Եփես։ Դ։ 5
Մի Հաւատք	Յուդ։ Ա։ 3։ Եփես։ Դ։ 5
Մի Յոյս	Ա։ Յովհ։ Գ։ 3։ Եփես։ Դ։ 4
Մի Սէր	Ա։ Կորնթ։ ԺԳ։ 13։ Ա։ Տիմոթ։ Ա։ 5
Մի Աւետարան	Ա։ Տիմոթ։ Ա։ 11։ Գաղատ։ Ա։ 6–10
Մի Մկրտութիւն	Հռովմ։ Զ։ 3։ Եփես։ Դ։ 5
Մի Հաղորդութիւն	Ա։ Կորնթ։ Ա։ 9։ Ա։ Կորնթ։ Ժ։ 16
Մի Եկեղեցի	Եփես։ Ե։ 23։ Յովհ։ ԺԷ։ 11–23
Մի Միջնորդ	Եբրա։ Ը։ 6։ Ա։ Տիմոթ։ Բ։ 5

Digitized by Google

Մի Բարեխաօս	Հռովմ. Ը. 34 Ա. Յովհ. Բ. 1–2
Մի Հոգի	Ծննդ. Բ. 7. Եփես. Դ. 4
Մի Մարմին	Ծննդ. Բ. 23. Եփես. Դ. 4
Մի Ցարութիւն	Դանիել. ԺԲ. 2. Ա. Կորնթ. ԺԵ. 42
Մի Դատաստան	Եբրա. Թ. 27 Եբրա, Ժ. 27
Մի Արքայութիւն	Յայտ ԻԱ. 1–27. Մատթ. ԻԵ. 34
Մի Հօտ և մի Հովիւ	Յովհ. ԺԷ. 21–23. Յովհ. Ժ. 16

ԱՀԱՒԱՍԻԿ

ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ՝ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

Մէկը որ Քրիստոսի Հոգին չունի անիկայ անորը չէ, Հռովմ. Ը. 1–9–14–39։

Կը խօսինք ոչ թէ խօսքերով զոր մարդկային իմաստութիւնը կը սորվեցունէ, այլ զոր Ս. Հոգին կը սորվեցունէ, և զՀոգևորս կը համեմատեմք Հոգևորաց հետ։ Իսկ շնչաւոր Մարդը չընդունիր Աստուծոյ Հոգւոյն բաներըը, քանզի անոնք յիմարութիւն են անոր և չկրնար իսկ գիտնալ, քանզի Հոգևորապէս կը քննուին։ Բայց այն որ Հոգևոր է կը քննէ զամենայն, և ինք չքննուիր ուրիշէ. քանզի ով գիտցաւ Տէրոջը միտքը, որ ըլլայ անոր խրատու, բայց մենք ունիմք Քրիստոսի միտքը։ Ա. Կորնթ. Բ. 13–16։

Digitized by Google

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻՈՑ

Կը հաւատանք զ Աստուծոյ՝ Ամենակալ Հօր երկինքի ու երկրի երևցած ու չերևցած իրերուն Ստեղծողին։

Եւ զ Տէր Յիսուս Քրիստոսին Աստուծոյ Որդւոյն, Հօր Աստուծմէ ծնածին, այսինքն Հօրը Էութենէն, Աստուած Աստուծմէն, լոյս լոյսէն, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծմէն, ծնած է ու չէ թէ ստեղծուած։

Նոյն ինքը Հօրը բնութենէն ըլլալով, անով ամենքան եղաւ երկինքի ու երկրի վրայ եղած՝ երևցածներն ու չերևցածները։ Մեզ մարդոց համար՝ և մեր փրկութեանը համար երկինքէն իջաւ, մարմին առաւ, մարդ եղաւ, Սուրբ Հոգւոյն ներգործութեամբը Մարիամ սուրբ կոյսէն կատարելութեամբ ծնաւ, ուր առաւ մարմին հոգի և միտք և ինչ որ կայ մարդուս մէջ ճշմարտութեամբ ու չէ թէ կարծեօք։ Զարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, և երրորդ օրը յարութիւն առաւ, երկինքը ելաւ նոյն մարմինովը Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ, և պիտի գայ նոյն մարմինովը ու Հօրը փառքովը կենդանիները ու մեռածները դատելու համար, որուն թագաւորութիւնը վերջ չունի։

Կը հաւատանք զ սուրբ Հոգի իին՝ անեղին ու կատարեալին որ խօսեցաւ օրէնքներու, մարգարէներու, և Աւետարանին մէջ, Յորդանան իջաւ, ղրկուածը քարոզեց և սուրբերուն մէջ բնակեցաւ։

Կը հաւատամք զ Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցիին, զ մկրտութեան, ապաշխարութեան, մեղաց թողութեան և քաւութեան, մեռելներու յարութեան, հոգիներուն ու մարմիններուն (վերջին) յաւիտենական դատաստանին, և երկնից Արքայութեան յաւիտենական կեանքին։

Digitized by Google

Ծակայն մենք՝ կը փառաւորենք երկրպագութիւն մատուցանելով յաւիտենականութենէ առաջ Ս. Երրորդութեան և դ Աստուածութեան, հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն հիմա ու միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամեն։

Հաստատեր՝ գրուեցաւ Քսի. թուականին Ն՛ին 328ին։

Ընդարձակը՝ գրուեցաւ Քսի. թուականին Կ. Պոլիս 381ին։

Յաւիտենականութենէ առաջ ըսուած խօսքը՝ գալիք կեանքին կը նայի. Յաւիտենական դատաստանին ըսուած խօսքը՝ վերջին դատաստանին կը նայի։

ԳՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ

Զիս սիրեցէ՛ք	Յովհ.	ԺԴ.	21
Իմ պատուէրներս պահեցէ՛ք	Յովհ.	ԺԴ.	15
Իրար սիրեցէ՛ք	Կողոս.	Դ.	13
Իմ մէջս կեցէ՛ք	Յովհ.	ԺԵ.	4
Հաւատով մկրտուեցէ՛ք	Մարկ.	ԺԶ.	16
Դռնփակ աղօթեցէ՛ք	Մատթ.	Զ.	6
Ինձ հաւատացէ՛ք	Յովհ.	ԺԴ.	1
Աչակերտեցէ՛ք	Մատթ.	ԻԸ.	19
Ոտքեր լուացէ՛ք	Յովհ.	ԺԳ.	14
Ապաշխարեցէ՛ք	Մարկ.	Ա.	15
Խաչս կրեցէ՛ք	Ղուկ.	Թ.	23
Խպտաւ համբերեցէ՛ք	Մատթ.	Ժ.	22
Թշնամին սիրեցէ՛ք	Մատթ.	Ե.	44
Մի՛ անիծէք այլ օրհնեցէ՛ք	Ղուկ.	Զ.	23
Կեղծաւորութեան խմորէն զգուշացէ՛ք	Ղուկ.	ԺԲ.	1
Սրվեցուցէ՛ք	Մատթ.	ԻԸ.	20
Ցիշատակս կատարեցէ՛ք	Ղուկ.	ԻԲ.	19
Ձեր կեանքը ուրացէ՛ք	Ղուկ.	Թ.	23
Հալածանաց մէջ ցնծացէ՛ք	Մատթ.	Ե.	22
Ինձի համար ամեն բան զոհեցէ՛ք	Մարկ.	Ժ.	29

Digitized by Google

Ստութիւնը հերքեցէք	Մատթ. Ե.	33
Պտղաբերեցէք .	Յովհ. ԺԵ.	8
Աստուծմէ վախցէք	Ղուկ. ԺԲ.	5
Արքայութիւն և արդարութիւնը խնդրեցէք	Մատթ. Զ.	33
Աստուծոյ կամացը յանձնուեցէք	Մատթ. Զ.	10
Շնորհաց Հոգին մի՛ տրտմեցնէք	Եփես. Դ.	30
Աւետարանը քարոզեցէք	Մատթ. Ժ.	7
Կեանքով լուսոյ նման փայլեցէք	Մատթ. Ե.	16
Հեզութիւն սորվեցէք	Մատթ. ԺԱ.	29
Ապտակ զարնողին միւս երես դարձուցէք	Մատթ. Ե.	39
Կարօտելոյն օգնեցէք Աղքատին պիտոյիցը բարեբարեցէք Հիւանդաց այցելեցէք Տառապեալին տես գացէք	Մատթ. ԻԵ.	34–36
Զեզմէ ուզողին չնորհեցէք	Մատթ. Ե.	42
Սիրով միացէք	Յովհ. ԺԷ.	21
Ցուսով քալեցէք	Կորնթ. Ա.	23
Աշխարհիս մէջ մեռած սեպուեցէք	Հռովմ. Զ.	11
Հոգւով աղքատցէք	Մատթ. Ե.	3
Ճշմարտութեան ծարաւեցէք	Յովհ. Դ.	13
Աղօթքներով մի՛ շատախօսէք	Մատթ. Զ.	5
Մարմնոյ պէտքը շատ մի՛ մտածէք	Մատթ. Զ.	25
Նախ ձեր աչքին գերանը հանեցէք	Մատթ. Է.	5
Անգին մարգարիտը ծախու առէք	Մատթ. ԺԳ.	46
Նեղ դռնէն ներս մտնելու ջանացէք	Մատթ. Ե.	13
Ձեր դանձը երկինքը պատրաստեցէք	Մատթ. Զ.	20
Մեն բան փորձեցէք աղեկը ընդունեցէք	Ա. Թեսաղ. Ե.	21
Ոչխարազգեստ գայլերէ զգուշացէք	Մատթ. Է.	15

Digitized by Google

Տկար մարմնով չեմ ես կարող՝ ճիշտ անթերի կատարելու
Շնորհէ՛ Տէր ինձ զօրութիւն՝ կարողութիւն և ուրթնութիւն,
Աշակերտիմ կատարելու՝ և ուղղութեամբ միշտ քալելու
Քոյդ շնորհաց վստահացած՝ միշտ կը խնդրեմ ներողութիւն։

Քրիստոնեան իւր բոլոր կենացը մէջ պարտաւոր է
Սոյն հրամանները հնազանդութեամբ կատարելու,
Եւ շնորհիւ Սուրբ Հոգւոյն դեպի նպատակն կը դիմէ
Որով զօրացած կատարելութեան մէջ յառաջանալու։

Բանական և անխարդախ կաթին փափաքեցէք, որով մեծնաք ի փրկութիւն, Ա. Պետր. Բ. 2։

Այս է միակ նշանակուած՝ կենաց բանին պատուերը,
Պետքէ մնամք հնազանդած՝ մեծարելով պատուերը։
Թէև ըլլանք մահուամբ խաչուած՝ պէտքէ սիրենք պատուերը,
Թէև զոհուինք անօթեցած՝ պէտքէ պահենք պատուերը։
Յեսէք յայտնի ապացուցուած՝ սոյն վկայեալ պատուերը,
Թէ որ գանէք ճշտիւ զրուած՝ ընդունեցէք պատուերը։
Այս է յերկնից մեզ ընծայած՝ Աստուածաշունչ պատուերը,
Այս է միակ ճիշտ վկայուած՝ Հոգիաշունչ պատուերը։
Շատեր եկան ինչ ինչ ըսած՝ և ծուեցին պատուերը,
Արդ մենք մնամք միշտ և ուխտած՝ հաստատ պահել պատուերը։

Մկրտութեան ջուրը՝ առանց հաւատոյ կեանք չունի,
Հաղորդութեան նիւթը՝ առանց հաւատոյ կեանք չունի։
Բերնի հաւատքը՝ առանց սուրբ սիրոյ կեանք չունի,
Նաև սուրբ սէրը՝ առանց Աստուծոյ կեանք չունի
Խորհրդոց պէտքը՝ միայն վայելմամբ կեանք չունի,
Ինչպէս մարմինը՝ առանց հոգւոյ կեանք չունի։

Յովհ. Զ. 64։ Ա. Կորնթ. Ժ.Գ. 1–3։

Digitized by Google

Ձայն մը· Մատթ. ԺԱ· 28–30

Ահա ձայն մը Աստղիմայ՝ տես կը հնչի անուշիկ,
Կը հրաւիրէ ձայնելով՝ եկէք ինձի որ հանգչիք։
Ես եմ այն Հաց կենդանի՝ նաև աղբիւր յորդահոս,
Ճշմարտութեան իսկ կեդրոն՝ եւ առ Հայր իմ բարեխօս։
Ես եմ բարի քաջ հովիւ՝ դուռն կենաց սրբութեան,
Եւ ճանապարհ որ տանի՝ անմահութեան կայարան։
Ես եմ այն որթ արմատով՝ որ տամ իմ ուժ ճուղերու։
Երբ նա լեցուի շատ պտղով՝ Հայրս է մշակ սրբելու։
Ինձի եկէք յոգնածներ՝ ձեր բեռները ոսկրնիդ,
Թեթևցնեմ ձեր յոգեր՝ մեկէն հանգչիք հոգինիդ։
Ես շատ հեզ եմ ու խոնարհ՝ ինձմէ եկէք սորվելու,
Երանութեան իմ դասեր՝ ձեզի խրատ սիրարկու։

Երկրին վրայ սով պիտի խրկեմ, չէ թէ հացի սով և չէ թէ ջուրի ծարաւ, հապա Տէրոջը լսելը սովը Ամոս· Ը· 11։

Զիս կենաց ջուրին աղբիւրը թողուցին, և իրենց գուբեր փորեցին, ծակոտ գուբեր՝ որ չեն կրնար ջուր պահել, Երեմ· Բ· 13։

Գառն Աստուծոյ· Յովհ. Ա· 27–37

Լուծել կապեր չեմ արժանի՝ տես կը ձայնէ ձայն բարբառոյ,
Մեղաց բարձողին աշխարհի՝ ահաւասիկ Գառն Աստուծոյ։
Մեղաւորաց դուն ես փրկիչ՝ որ յանձն առիր խաչն ամօթոյ,
Ո՞վ է միակ մեր փաստիչ՝ ահաւասիկ Գառն Աստուծոյ
Միանդամայն ձայն օրհնութեան՝ Հոգին և Հարսն կան երգելոյ,
Կշռեն մեզի ի փրկութիւն՝ ահաւասիկ Գառն Աստուծոյ։
Լսել տուր մեզ այն սուրբ ձայնը՝ ո՞վ Տէր միակ մերին յուսոյ,
Ո՞վ է սրբիչ մեր մեղքերը՝ ահաւասիկ Գառն Աստուծոյ։

Աղօթք· Մատթ. Զ· 10–13

Բաղկատարած և խոնարհած, քեզ կաղաչենք ո՛վ Հայր [illegible]
Շնորհէ մեզի քոյ օրհնութիւն՝ արժանանանք տալ [illegible]

Digitized by Google

Աղերինք յաւէտ մեք սրբութեամբ՝ ըլլանք մաօք իմաստութեամբ,
Սրվինք լինիլ կենաց միշտ հեզ՝ ազօթելով ներկայիլ Քեզ։
Այս առուան մեր աղերսներ՝ հանոյ ըլլան քեզ Աստուած մեր,
Եւ օրհնութիւն քեզմէ առած՝ լինինք հաղորդ նոր շնորհաց։
Թող հիմնուի մեր մէջ խօսքդ՝ միշտ ունենալով քու շնորհքդ,
Հաւատ յոյս սէր միշտ պահելով՝ օրհնենք զքեզ վառատարելով։
Քեզ զթութեան Հօր Աստուծոյ՝ և միածին սիրուն Որդւոյ,
Նաև Հոգւոյդ ճշմարտութեան՝ կ'երկրպագենք միշտ յաւիտեան։

Հաւատք սուրբ սիրով. Ա. Կորնթ. ԺԳ. 1–13

Ի՞նչ որ կընէ թեւեր արծուին՝ նայնպէս կըսեմ Քրիստոնէին,
Սուրբ հաւատքը սիրով սրտին՝ յուսոյ թեւով վեր կը թռչին։
Երբ մեր աչքեր հոն վեր նային՝ մերկանալով կենաց անոտին,
Յանժամ իբրև մայր բաղմանին՝ բարի գործքեր զաւակ ծնին։
Արդ խոնարհած դիմենք Փրկչին՝ մեղաւորաց բարեկամին,
Անով հիւանդք կը բժշկին՝ անով ոդէտք լուսաւորին։
Նա քաղցելոց տուն հացալին՝ Նա ծարաւին ջուր զովագին,
Եւ հեծելոց տեղ հանգստին՝ որք բեռերու տակ կը ճնչին։

ՊԱՏԱՐԱԳ

Է նուէր,	Մատթ.	Բ.	11
Է ողորմութիւն,	Եբրա.	ԺԳ.	16
Է հեզութիւն,	Սաղմ.	ԾԱ.	17
Է աղօթք,	Սաղմ.	ՃԽԱ.	2
Է ղոհ,	Եբրա.	Ժ.	12
Է դաւանութիւն,	Եբրա.	ԺԳ.	15

Ապաւինութիւն. Եբրա. Ժ. 10

Օրհնեալ ես Յիսուս Փրկիչ աշխարհի՝ յոյս և քաւութիւն մարդ-
կային ազգի։
Օրհնեալ ես Յիսուս Միածին Որդի՝ արիւնդ թափեցիր վրայ
փայտ խաչի։
Օրհնեալ ես Յիսուս մեղքը սրբեցիր՝ և անմահութիւն մեզ պար-
գեւեցիր։

Digitized by Google

Օրհնեալ ես Ցիսուս ճանապարհ կենաց՝ և ճշմարտութիւն դու
ես անկասկած։

Տէր մեզ արժանի ըրէ կաղաչեմք՝ հաւատով սիրով քեզի միշտ
դիմենք։

Մեր պանդխտութեան կեանքին ցաւալի՝ եղիր օգնական ո՛վ
Փրկիչ բարի

Թող լուա մեր մեղք արիւնդ պատուական՝ որ նոր թափեցիր
սակս փրկութեան։

Բարերար Ցիսուս դու միակ մեր յոյս՝ վասն նորոգման մեղսալից
հոգւոյս։

Լեցուր շնորհօք տուր մեզ խրախոյս՝ անչէջ պահելով հաւատոյ
զլոյս։

Միակ Պատարագ և զոհ փրկութեան՝ և մեծ քահանայ դու ես
յաւիտեան

Ո՛վ միա՛ միջնորդ քաւութիւն մեզաց՝ եղիր բարեխօս քու Հօրդ
ողթած։

Ապրինք շնորհիւ քոյին անսասան՝ որչափ կը շնչենք չունչ կեն-
դանութեան։

Եւ ցրտացուցիչ թևերը մահուան՝ երբ որ կը պատեն մարմինը
եղծական։

Զղենք մենք խաղիւ այս կեանք վչտալի՝ ձայնելով Ցիսուս ընկա՛լ
մեր հոգի։

Նոր Երուսաղէմ. Ցայտ. ԻԱ. 2

Երկինքը կայ տուն երջանիկ՝ ո՛վ Տէր մեզ հոն ընդունէ,
Հոն են հանգչած մեր սիրելիք՝ մեզ ալ հոն տեղ ընդունէ։
Հոն Փրկիչը մենք տեսնելու՝ կուգանք ո՛վ Տէր ընդունէ,
Վերին սրբոց ժողովներու՝ մեզ դասելով ընդունէ։
Ո՛վ սուրբ խաղաղ բնակարան՝ դուռդ բաց մեզ ընդունէ,
Այս աշխարհիս ցաւէն համայն՝ ազատելով ընդունէ։
Կապուածներ հոն են արձկուած՝ հոգնածները ընդունէ,
Ցաւը մահը հոն է դադրած՝ հոն տեղ և մեզ ընդունէ։
Թո՛ղ մեր աղօթք միշտ այս ըլլայ՝ մեզ հոն ո՛վ Տէր ընդունէ,
Երբ մեր հոգին թռչի քեզ գայ՝ հոն սիրովդ ընդունէ։
Քեզ բուրվառով անուշ հոտեր՝ պիտի խնկենք ընդունէ,
Եւ օրհնութեան ալէլուներ՝ քեզ պիտ երգենք ընդունէ։
Ո՛վ երկնային Երուսաղէմ՝ մեզ դէպի ներս ընդունէ,
Դանդ երբոր դանք և մտնենք՝ փառացդ մէջ ընդունէ։

Digitized by Google

Հոն չեն մոներ ամեն պիղծեր՝ հոն տեղ մեզ առ ընդունէ,
Հոն չեն մոներ ստախօսներ՝ այն կեանքին մէջ ընդունէ։
Մարգարիտ են այն դռները՝ դռնէդ մեզ ներս ընդունէ,
Ոսկեղէն են այն չէնքերը՝ հոն մեզ դիտով ընդունէ։
Դուն ես յոյս մեր Գառն գենուած՝ մեզ մաքրելով ընդունէ,
Ցաղթողներու հետը ծայնած՝ փառք պիտի տանք ընդունէ։

Աղերս փրկութեան. Մատթ. Ը. 25–27

Փրկէ՛ փրկէ՛ տառապանքէ՝ փրկէ՛ փրկէ՛ ի մեզաց,
Փրկէ՛ փրկէ՛ մեզ ցաւերէ՝ ո՛վ ազատիչ մեր Աստուած,
Փրկէ՛ մեզ փրկէ՛ մեզ՝ փրկեալ փութա՛ մեզ դիտած։

Փրկէ՛ փրկէ՛ մեզ նեղողէ՝ փրկէ՛ փրկէ՛ ի չարեաց,
Փրկէ՛ փրկէ՛ մեզ վիշտերէ՝ ո՛վ պաշտպան մեր Աստուած,
Փրկէ՛ մեզ փրկէ՛ ժեզ՝ փրկեալ փութա՛ մեզ դիտած։

Փրկէ՛ փրկէ՛ սխալմունքէ՝ փրկէ՛ փրկէ՛ ազատած,
Փրկէ՛ փրկէ՛ բարերարէ՝ ո՛վ ողորմած մեր Աստուած,
Փրկէ՛ մեզ փրկէ՛ մեզ՝ փրկեալ փութա՛ մեզ դիտած։

Ցոյս Հռովմ. Ե. 2

Երկինք տայ խրախոյս՝ Շնորհաց և վեհ լոյս,
Շնորհէ ինձ Յիսուս՝ ո՛վ միակ դու իմ յոյս։
Է կեղրոն իմ սիրոյս՝ է հանգիստ իմ մտոյս,
Շնորհէ ինձ Յիսուս՝ ո՛վ միակ դու իմ յոյս։
Տուր Շնորհք իմ հոգւոյս՝ տուր ուղի իմ՛ա ընուս,
Շնորհէ ինձ Յիսուս՝ ո՛վ միակ դու իմ յոյս։

Կուգամ քեզ. Ա. Յովհ. Ա. 7

Իմ բարեաց մաքրուած՝ պաշտօնիս ապօթած,
Զիք սրբիլ մեղքերէս՝ ո՛վ Փրկիչ կուգամ քեզ։
Միշտ եմ ես անմաքուր՝ դու միայն սրբատուր,
Զիս առ քեզ կը կանչես՝ ո՛վ Փրկիչ կուգամ քեզ։
Անձն առիր այն խաչը՝ իմ մեղաց անէծքը,
Թաղեցար մարմնապէս՝ ո՛վ Փրկիչ կուգամ քեզ։
Միշտ ես դու ողորմած՝ բարեգութ և գթած,
Քու սրտովդ կը սիրես՝ ո՛վ Փրկիչ կուգամ քեզ։

Digitized by Google

Եւ կուգես փրկութիւն՝ ողորմած Փրկիչ իմ,
Սրբուիլ մեղքերէս՝ ո՛վ Փրկիչ կուգամ քեզ։

Խաչին տեսարանը. Գաղատ. Զ. 14

Տեսնել կուգամ այն Գլուխը՝ սպակուեցաւ փուշերով,
Տեսնել կուգամ այն Երեսը՝ շաղախեցաւ թուքերով։
Տեսնել կուգամ այն սուրբ Անձը՝ որ խաչուեցաւ գամերով,
Տեսնել կուգամ այն Յիսուսը՝ որ զոհուեցաւ մեռնելով։
Տեսնել կուգամ այն Փրկիչը՝ որ մեզ փրկեց իւր մահով,
Տեսնել կուգամ սիրուն Տէրը՝ որ համբարձաւ մարմնով։
Տեսնել կուգամ այն Միջնորդը՝ որ նստեցաւ իւր Հօրքով,
Տեսնել կուգամ այն Աթոռը՝ որ բացուեցաւ մեզ իրմով։

Փափաք հաւատոյ. Հռովմ. Ե. 1

Տէ՛ր իմ հոգիս ո՛վ Յիսուս՝ կը խոստովի իրր անյոյս,
Դարձուր քեզի փութապէս՝ արդ կաղաչեմ իմ սրտէս։
Դու գանձ սիրոյ ո՛վ Յիսուս՝ որ ես սիրող իմ հոգւոյս,
Քու վերհ լոյսդ ցանկալի՝ ճառագայթէ իմ սրտի։
Կուգամ սիրով խոնարհած՝ խաչիդ առջև ծնրադրած,
Ո՞հ կը խնդրեմ քաւութիւն՝ նաև սրտի սրբութիւն։
Կը հաւատամ քեզ Փրկիչ՝ փրկէ՝ փրկէ՝ ապատիչ,
Իմ մեղքերէս դիս մաքրած՝ արժանացուր քոյդ Հորհաց։

Հրաւեր Յիսուսի. Յայտ. Գ. 14–22

Յիսուս կըսէ մեղաւորին՝ թէ կարօտ ես եկուր ինծի,
Նաև թշուառ մեղօք սրտին՝ ես եմ ներող եկուր ինծի։
Թէ աղքատ ես նաև ալ մերկ՝ եմ հոգատար եկուր ինծի,
Զլլայ մնաս դու յուսաբեկ՝ եմ խնամող եկուր ինծի։
Թէ վտանգներ քեզ պաշարեն՝ դու մի վախնար եկուր ինծի,
Թէ փորձութիւնք ալեկոծեն՝ եմ ապատիչ եկուր ինծի։
Աղքատութիւնք թէ քեզ ներեն՝ ես եմ քեզ հաց եկուր ինծի։
Թէ թշնամիք քեզ հալածեն՝ եմ ապաւէն եկուր ինծի։

Խաչն Քրիստոսի. Մատթ. ԻԷ. 27–50

Ո՞վ մեղաւոր նայէ խաչին՝ տեսիր զոհուած մարմին Փրկչին,
Որուն արիւն վար կը վազին՝ որով մեղքեր կը սրբուին։

Digitized by Google

Նայէ՛ ձեռքին և ալ ոտքին՝ նաև ծակուած խոցք կողին,
Գլուխն եղած փուշ պսակին՝ որ յանձն առաւ մահը խաչին։
Նա համբերեց ի սէր քոյին՝ տարաւ միջտեր նախատինքին,
Թուք կար երես գամ ի ձեռին՝ էր սեծագոյն սէրն Նորին։
Հոն սրբուցին քաղաքն լեցին՝ աղաղակեց ձայնիւ ուժգին,
Ինչու թողեր դիս ի խաչին՝ հոն աւանդեց իր սուրբ հոգին։
Կենաց բարիք այս աշխարհին՝ ալ թող զոհուի ի սէր Փրկչին,
Անհամեմատ Պատարագին՝ որ կատարեց Աստուածորդին։
Արդ մնաենանք այն սուրբ Զոհին՝ և նուիրենք մերին հոգին,
Ուր աղաչենք յոյժ Ջերմագին՝ ներողութիւն մերին մեղքին։

Նուիրում. Ղուկ. ԻԴ. 34

Պատրաստ է Յիսուս զմեզ դրկելու՝ ձեռքերը բացած զթով սիրելու,
Մնանենանք յոժար անոր խոնարհած՝ զղջացեալ սրտով և ապաշաւած։
Տես կայ ի խաչին մշնայ պսակով՝ գամեր փոյ իւր ձեռք ծակած խոցեալով։
Անչափ ցաւ ունի Նա իր սրտին մէջ՝ կը հրաւիրէ ուենենանք մենք զեղջ։
Կը վազի արիւն աղբիւրի նման՝ որով կը սրբի մեր մեղքեր համայն,
Է Գառն Աստուծոյ է զոհ նուիրուած՝ է և բարեխօս առ Հայրն զթած։
Ուր տեղ կ'աղերսէ ձայնիւ խնդրանք՝ Հայր ներէ սոցա կըսէ մաղթանք,
Ասանկ մի զոհի կուտամ ամեն բան՝ ասանկ մի զոհի իմ սիրտս հոմայն։

Կուզամ Մատթ. ԺԶ. 24

Դուն ես սրբոյ Նորոգող՝ Նաև մեղաց իմ ներող,
Կը հրաւիրես զթոյդ այն՝ Յիսուս կուզամ քեզ միայն։
Համբերեցիր զու խաչին՝ սրտատրոչոր ցաւագին,
Եւ խմեցիր լեղին այն՝ Յիսուս կուզամ քեզ միայն։
Ո՛հ աղաչ սա եմ նաև մերի՝ դոյր եմ ալչոք յուսարեկ,
Ցիս կը կանչես սիրոյդ այն՝ Յիսուս կուզամ քեզ միայն։
Օրհնէ՛ զիս Տէր օրհնուիմ՝ սուրբ արեամբդ սրբուիմ,
Եւ սորվեցու զասին այն՝ Յիսուս կուզամ քեզ միայն։

Digitized by Google

Զատկ. Յայտ. Գ. 5

Քաղցր ձայնիւ իւր բերնէն՝ մեր Փրկիչը կը խօսի
Կուտայ դասեր իւր արտէն՝ է երանիկ և բարի։
Ոչ ոք ոչ որ կը յաղթէ՝ այս աշխարհիս մեղուքիւն,
Միա հաւատնամ ճերմակէ՝ նորա ընդեռա լուսազոյն։
Որուն անուն պիտի դրեմ՝ կենաց դրքին ես վերջը։
Զէ ոք կարող արդ կրեմ՝ սրբել անկէ նոյն դիրը։
Զմեզ պիտի ես առանիմ՝ սուրբ երկնային քաղաքը,
Ասիկայ է ինորհ իմ՝ նստիլ ինձ հետ աթոռը։

Յիսուսի անունը. Մատթ. Ա. 21

Ընտիր սիրուն անուն չիկայ՝ որչափ Յիսուս անունը,
Հայրը յերկնից ահա կուտայ՝ դիս Փրկողին անունը,
Ո՛հ կը ցանկամ տեսնել Յիսուս՝ նստած Հօրը աջ կողմը;
Ընտիր սիրուն անուն չիկայ՝ որչափ Յիսուս անունը։
Հրեշտակը ըսաւ դնեմ՝ Յիսուս Նորա անունը,
Է՛ր երանի՝ սիրուներ սրտէն՝ Նորա սիրուն անունը,
Ո՛հ կը ցանկամ տեսնել Յիսուս՝ նստած Հօրը աջ կողմը,
Ընտիր սիրուն անուն չիկայ՝ որչափ Յիսուս անունը։
Խաչին վրայ ալ գրեցին՝ այս սուրբ սիրուն անունը,
Նա համբերեց տոկաց խաչին՝ որ մեծարեմ անունը,
Ո՛հ կը ցանկամ տեսնել Յիսուս՝ նստած Հօրը աջ կողմը,
Ընտիր սիրուն անուն չիկայ՝ որչափ Յիսուս անունը։
Պիտի երդեմ ես օրհնութեամբ՝ սիրուն Փրկչիս անունը,
Ցաղթեց մահը Նա յարութեամբ՝ ինձ կեանք տուաւ անունը,
Ո՛հ կը ցանկամ տեսնել Յիսուս՝ նստած Հօրը աջ կողմը,
Ընտիր սիրուն անուն չիկայ՝ որչափ Յիսուս անունը։

Հայրենիք երկինք. Եբր. ԺԱ. 10

Ի՛նչ դեղեցիկ է ան ճամբան՝ որ կը տանի մեզ երկինք.
Հոն պատրաստ կայ սուրբ օթևան՝ ան է քաղցր հայրենիք։
Հոն արցունքներ էն դադարած՝ հոն են սիրուն սիրելիք,
Հոն գացողներ են երանած՝ ան է քաղցր հայրենիք։
Եղբարք երթանք մենք միաբան՝ սիրով սկկտեղ քալէինք,
Բայց երդէինք ճամբուն վրան՝ ան է քաղցր հայրենիք։

Digitized by Google

Մաղ. Բ. Կարգ. Բ. 16

Մահն է գաւառն անմահութեան՝ և է սկիզբն նոր կենաց,
Մեզ կը տանի յաւերժութեան՝ այն աշխարհն որ է անանց։
Մահն է հանգիստ սրբոց հոմայն՝ որոնք վշտէ ազատած,
Կերթան հրճուիլ գրախտն այն՝ որ հոն մնան միշտ հանգչած։
Մահն է երկիւղ անոնց միայն՝ որք են մեղքը տանջուած,
Զորս տանի կեանքէն առ այն՝ չարագործին պատրաստած։

Գաղ. Աստուծոյ Ցայտ. Գ. 17-18

Եմ ես թշուառ նաև ազքատ՝ մերկ կոյր, նօթի, և յուսահատ,
Սոյն վիճակէս ապատելու՝ քեզի կուգամ Գառն Աստուծոյ։
Զունիմ քնաւ արդարութիւն՝ դարձ կատարեալ ի քաւութիւն,
Սուրբ արեամբդ որքուելու, քեզի կուգամ Գառն Աստուծոյ։
Դուն այնտեղ մեզ գնեցիր՝ նաև խաչէդ սրբեցուցիր,
Ներողութիւն ես առնելու՝ քեզի կուգամ Գառն Աստուծոյ։
Տէ՛ր դիմովդ զիս ընդունէ՝ ներէ մեղքս նաև ջնջէ,
Սուրբ սիրտ մը ես ստանալու՝ քեզի կուգամ Գառն Աստուծոյ։

Երկինք կայ միայն լոյս՝ դժոխքն է մութ անլոյս՝ աշխարհ կայ մութ և լոյս,
Դու խօսէ զհաւատ՝ շատեր են անհաւատ՝ ուր կայ սէր և հաւատ։
Աղքատաց չիք ինչ յոյս՝ մեծատանց շատ կայ յոյս՝ թշուառաց վատ է յոյս,
Դու փնտռէ միշտ այն սէր՝ ուր է կայ այն սուրբ սէր՝ շուրթերով կեղծ ի սէր։

Աղօթք. Հռովմ. ԺԲ. 12

Երեքսրբեան ովք զթած Տէր՝ մենք ենք միայն չարագործներ,
Քու քովդ կան լի բարիքներ՝ իսկ մեր քովը կան չարիքներ։
Կարօտ ենք մենք քու շնորհքիդ՝ միշտ և յաւէտ կենաց բանիդ,
Տուր օրհնութիւնդ աղաչողիդ՝ արժանանայ սուրբ պսպղելիդ։
Դու թաղաւոր նաև մեր Տէր՝ քեզ կը նային մերին աչքեր,
Համէ լսել ովք սուրբ Հայր մեր՝ քեզ կը ձօնենք մեր աղօթքներ։
Առ մեզի Տէր քո աջ կողմին՝ վասն անուան Յիսուս Փրկչին,
Փառք և պատիւ քեզ կը տրուին՝ միշտ և յաւէտ յաւիտեանին։

Digitized by Google

Հաղորդութիւն. Մատթ. ԻԶ. 26–29. Ա. Կորնթ. ԺԱ. 23–29

Ցիսուս նստաւ սեղանը՝ տուաւ հացը ու գինին,
Աշակերտաց շրջանին՝ է իմ տրիւն և մարմին։
Ըսաւ ըրէք յիշատակ՝ զի իմ խաչին է խորհուրդ,
Թող միշտ մնայ նշանակ՝ որով առնէք դուք սնունդ։
Նախ ամեն ոք զինք փորձէ՝ ապա վայլէ սեղանէն,
Առաջ հացէն ճաշակէ՝ ետքը խմէ բաժակէն։
Հոս յիշելով զիս խաչիւ՝ կերէք այս հաց օրհնութեան,
Եւ զբաժակն սուրբ արտիւ՝ խմէք արեանս է նման։

Արտասուաց ձոր. Ցուդ. Ա. 10

Մահը արդարը վիտէ ազատած տայ հանգստութիւն,
Փշալից կեանքէս արտասուաց ձորէն կը տանի փառաց,
Են որ չեն սիրեր այն վերին կոչման հրաւիրութիւն,
Քանզի չեն հաւատար կայ յաւէրժութիւն յետ աստի կենաց։
Մարդ երբ կը ծնի կըսկսի լալու ցաւեր ունի միշտ,
Այս ունայն կենաց յոյսերուն պատած կը մաշի արտով,
Երբ որ կը մեռնի կը դադրին ցաւեր իւր կենաց և վիշտ,
Կերթայ վայելու իր վարձատրութիւն մարմնով և հոգւով։
Կուլան մնացորդք իրրև յուսահատ և անմխիթար,
Ցոյս չունին անոնք թէ պիտի տեսնեն զիրար վերստին,
Հողով ծածկուած չքանալ ըսել խօսք տգիտաբար,
Ինչու որ չունին Աւետարանի լոյսը երկնային։

Սրբութիւն ի մեղաց Եբրա. Ա. 3

Արիւն Ցիսուսի սրբէ ի մեղաց՝ ահա կը վազի նա խաչին վրան,
Զոհ է Նա միակ ազգաց և ազանց՝ ահա զոհեալ կայ Նա խաչին վրան։
Ձեռքեր ու ոտքեր փայտին են զամած՝ փշեայ պսակ մը կայ գլխոյն վրան,
Նաև կողն ալ տէգով են խոցած՝ ահա զոհեալ կայ Նա խաչին վրան։
Մօտենանք խաչին սրտով խոնարհած՝ նայինք զղջումով այն զոհին վրան,
Որմէ վայելենք ներում մեր մեղաց՝ ահա զոհեալ կայ Նա խաչին վրան։

Digitized by Google

Ապաւինութիւն Յաղմ. ԽԶ. 1–11

Մեր Տէր Աստուած է ապաւէն՝ և օգնական զօրութիւն,
Մենք չենք վախնար չարիքներէն՝ թէ և գոռան ջուրք ծովուն։
Լեռներ ծովեր թէ ուռենան՝ թէ և սարսին ահռելի,
Գետոց վտակ միշտ կը ցընծան՝ ուրախ կ'ընեն բերկրալի։
Բնակարան Բարձրելոյն՝ Տէրոջ քաղաք անուանի։
Պիտի դիմեն Նորա սիրոյն՝ Տէրոջ որդիք սիրելի։
Նորա մէջն է մեր Տէր Աստուած՝ միշտ գթութեամբ մեզ կ'օգնէ,
Ո՛վ կը յուսայ Նորա դիմած՝ անկէ բարիք կը վայելէ։
Հեթանոսներ կը խռովին՝ և կը շարժին Բարձրեալէն,
Զայնը լսած տեսս կը մաչին՝ ու կը սարսին նոյն ահէն։
Զօրաց Տէրը միշտ մեր հետ է՝ նեղութենէ կազատէ,
Եւ Յակոբին Տէրը մերն է՝ ամեն ատեն կը պահէ։
Մեր Տէր Աստուածը է ապաւէն՝ և օգնական զօրութիւն,
Մենք չենք վախնար չարիքներէն՝ թէ և գոռան ջուրք ծովուն։

Կիւրակէ Յայտ. Ա. 10

Այս սուրբ օրուան օրհնութիւնը՝ ցողէ մեզի սուրբ Հայր մեր։
Նաև մերին գոհութիւնը՝ քեզ ընդունէ ով Տէր մեր։
Քու շնորհացդ սուրբ Աթոռին՝ կը մօտենանք խոնարհած,
Եւ կաղաչենք արտասուագին՝ ներէ մեզի Հայր գթած։
Ի՛նչ անուշ է սուրբ Կիրակին՝ տուիր ճաշակ նա մեզի,
Որ համն առնենք օրն հանգստին՝ այն երկնային շաբաթի։
Երկնից դռներ մեզ բանալով՝ կուտաս պարգև Հայրական,
Եւ մենք ղորս վայելելով՝ կըլլանք խոնարհ օրհնաբան։

Սուրբ Գիրք Բ. Տիմօթ. Գ. 14–17

Աստուածաշունչ սուրբ Մատեան՝ անդին գանձս մի միայն,
Մէջ կենացս ցաւալի՝ զքեզ ունիմ սիրելի։
Դուն ես միակ ուսուցիչ՝ և անմոլար իմ ուղղիչ,
Որով միշտ զիս կը վարժես՝ որ օգտուիմ դասէրէս։
Ողորմութեամբն Աստուծոյ՝ և շնորհիւ սուրբ Հոգւոյն,
Առաջնորդէ միշտ զիս դու՝ չ'ընկերանամ չարերու։
Թէ և ըլլայ սխալիմ՝ մեղաց մէջը գլորիմ,
Դու ես կուտաս ինձի յոյս՝ որ ես դիմեմ դէպ ի լոյս։

Digitized by Google

Շաբաթ Յայտ. ԻԱ. 1–4

Քու շաբաթներդ երկրի վրայ՝ ով Տէր որչափ կը սիրեմ,
Երկինքին մէջ մշտանայ՝ սուրբ շաբաթին կըսպասեմ։
Հոն երկրաւոր մտածութիւն՝ նաև հոգեր չեն մտներ,
Հոն յարատև ուրախութիւն՝ և օրհնութեան կան երգեր։
Ուրկէ ցաւեր հիւանդութիւնք՝ և փորձութիւնք կան հեռի,
Հոն ցընծալի երանութիւնք՝ խաղաղութիւն լի ու լի։
Ճամբորդութիւնս երբ կատարած՝ երբոր ես հոգ քեզի գամ,
Հրեշտակաց հետ միացած՝ փառք և պատիւ միշտ պիտի տամ։

Ցաւերժութիւն Հռոմվ. Զ. 22–23

Դու այն երկնից բարձրութենէն՝ ով վեհ աննիւթ իմաստութիւն,
Մահկանացուիս յուզեալ սրտէն՝ սորվիլ կուտաս յաւերժութիւն։

Հողէ չինուած մէջ վրանիս՝ անտանելի կայ նեղութիւն,
Է մխիթար այսմ վշտիս՝ այն Սփոփիչն յաւէրժութիւն։
Քու ազդումդ զիս կը տանի՝ այն զաւառին ի բարձրութիւն,
Ուր չարութիւն կը դադարի՝ հոն ես ունիմ յաւէրժութիւն։
Միշտ կը նայի իմ աչք երկրէ՝ դէպ ի վերին այն սրբութիւն,
Իմ հայրենիքս այն տեղը է՝ ուր կայ միայն յաւէրժութիւն։
Կը լեցնես սրտիս իղձը՝ մէկդի ձգած ունայնութիւն,
Եւ աշխարհիս ամեն կեղծը՝ զիս կը տանիս յաւէրժութիւն։
Այո՛ ով դու մխիթարիչ՝ որ ես միայն սփոփութիւն,
Կենաց գետէն զովացուցիչ՝ խմել կուտաս յաւէրժութիւն։
Ասա ձգած այս կենաց չինչ՝ նաև մարմնոյ հոգածութիւն,
Թողլով զանոնք իբրև ոչինչ՝ կուգամ գտնել յաւէրժութիւն։
Մահը չէ մահ նա է իսկ կեանք՝ կեղծ կը տեսնէ իմ տեսութիւն,
Նա ցուցուցած իր վերին փառք՝ զիս կը տանի յաւէրժութիւն։
Թող ալ մնան ինչ որ հոս կան՝ զորս պատուէ մարմին արիւն,
Հոն ոչինչ է այս ցանկական՝ ուր կը տիրէ յաւէրժութիւն։
Երբէք չըլլայ որ զիս կապտէ՝ այս կենացս զուարճութիւն,
Թող ես նայիմ ինչ որ վեր է՝ ով դու անմահ յաւէրժութիւն։
Այս աշխարհիս ասպարէզը՝ ունի ցաւեր և տրտմութիւն,
Ո՛հ կը փութամ տուր ինձ սիրտ մը՝ փնտռել միայն յաւէրժութիւն։

Digitized by Google

Մարաւութեան մեծ փափագով՝ քեզ կը դիմեմ ի զովութիւն,
Մարաւ հոգիս ահ վայլելով՝ անմահ ջրէդ յաւէրժութիւն։
Մահն է վէճս մեզ ծնելոց՝ օր մը մէկէն կուտայ ողջոյն,
Նա կ'ամփոփէ ամենն իր ծոց՝ անկէ ետքը յաւէրժութիւն։
Կայ օթեւան երկ վիճակի՝ որոյ ժառանգ է հաստատուն,
Մէկն է փառքի մէկն է վայի՝ ուր պիտի տայ յաւէրժութիւն։
Ահ երանի կ'ըսեմ անոնց՝ որք կը սիրեն զղրբութիւն,
Կերթան հանգչիլ ընդ արդարոց՝ այն երջանիկն յաւէրժութիւն։

Այն մէկ բանը որ պէտք է Ղուկ. Ժ. 41–42

Մարթա ինչո՞ւ այդչափ պէտքեր՝ այդ հոգերով պատո՞ւելէ,
Մարիամ սիրեց լսել պատուէր՝ այն մէկ բանը որ պէտք է։
Մարթա գիտեմ ունիս հոգեր՝ այն կերելեաց պիտոյք է,
Մարիամ նստած ինձ կը լսէր՝ այն մէկ բանը որ պէտք է։
Ո՛վ ժիր Մարթա հոգ մի ըներ՝ մարմնոյ պէտքը խիստ քիչ է,
Մարիամ ընտրեց հոգւոյն խօսքեր՝ այն մէկ բանը որ պէտք է։
Ձեզ ալ խրատ ո՛վ Մարթաներ՝ մի տագնապիք հոգերէ,
Միշտ սիրեցէք մեծ շահարեր՝ այն մէկ բանը որ պէտք է։
Եւ դուք սիրուն ո՛վ Մարիամներ՝ նստէք լսել խօսքերէ,
Զի իմ խօսքեր է կենսաբեր՝ այն մէկ բանը որ պէտք է։

Քրիստոսի նպատակը Եբր. Ժ. 2

Հօր միածին մարդ եղաւ՝ որ մեզ եղբայր անուանէ,
Նա խոնարհած վար իջաւ՝ որ մեզ երկինք վեր հանէ։
Իւր փառք ձգեց աղքատցաւ՝ որ մեզ հոգւով լեցուցէ,
Վիշտ տանելով խաչուեցաւ՝ որ մեզ մեղքէն ազատէ։
Փայտին վրայ գամուեցաւ՝ որ իւր մահով մեզ փրկէ,
Եւ թուք կրեց ծեծուեցաւ՝ որ մեզ չարեաց միշտ ներէ։
Անարգուած խոցուեցաւ՝ որ իւր վէրքով բժշկէ,
Եւ յարութեամբ վերացաւ՝ որ մեզ շնորհք պարգևէ։
Իմմանուէլ ըսուեցաւ՝ որ մեզ իրեն որդեգրէ,
Կենաց լոյսը մեզ բացաւ՝ որ մեզ հոգւով մկրտէ։

Երկնից Տունը Յայտ. ԻԱ. 1–27

Արժանացուր մեզի ո՛վ Տէր՝ մտնել երկնից սուրբ տունը,
Հոնկէ հեռի են վիշտ ցաւեր՝ հոն կը վայլենք հանգիստը։

Digitized by Google

Պատրաստեցիր հոն շնորհքներ՝ հաւատարիմ կեցողին,
Հոն են դրուած այն անուններ՝ որք համբերած տոկացին։
Փառաց պսակ ես հիւսեր՝ դոհարներով զարդարուած,
Փոխան կենացս վշտաբեր՝ կայ ոսկեղէն գահ փառաց։
Հոն կը դաղրին արտասուքներ՝ նաև վիշտին այն ցաւը,
Հոն կը հանգչին այն արդարներ՝ հոն կը վայլեն հանգիստը։

Ընդունեա՛ իմ հոգիս Գործ. Է. 58

Այն մահուան մօտ ժամուն կաղերսեմ՝ հաճէ՛ Տէր սեղմութիւն տալ վշտիս,
Եւ կենացս վերջ շնչոյն կաղաչեմ՝ Տէր Յիսուս ընդունէ իմ հոգիս։
Այս կենաց վիշտերէն ունիմ լաց՝ տրտմութիւն կայ պատած մէջ սրտիս,
Իմ բոլոր վիշտերէս ազատած՝ Տէր Յիսուս՝ ընդունէ իմ հոգիս։
Ո՛վ դու մահ բարեկամ արդարին՝ սրբելով արցունքէն աչխարհիս,
Կը տանիս ի հանգիստ երկնային՝ հոն Յիսուս ընդունէ իմ հոգիս։

Խաչդ առ Մատթ. ԺԶ. 24

Ինչպէս յերկնից քեզ այցելել՝ փութա ետիս եկուր,
Եկայ իմ դաս սորվեցուցել՝ խաչդ առ ետիս եկուր,
Խաչդ առ՝ խաչդ առ՝ խաչդ առ ետիս եկուր։

Իմ բեռս է փոքր թեթև՝ յուսդ առած եկուր,
Եւ իմ լուծս քաղցր է նաև՝ խաչդ առ ետիս եկուր,
Խաչդ առ՝ խաչդ առ՝ խաչդ առ ետիս եկուր։

Դու ուրացիր թող այս կեանքը՝ ծդէ այս չինչ ինձ եկուր,
Եւ աշխարհիս փառաց գահը՝ խաչդ առ ետիս եկուր,
Խաչդ առ՝ խաչդ առ՝ խաչդ առ ետիս եկուր։

Ճանապարհ կենաց Յովհ. ԺԴ. 6

Ո՛վ Տէր միակ դու ճանապարհ՝ որ կը տանիս ի յերկին,
Առանց քեզի մատչիլ առ Հայր՝ չիք հաշտարար բնաւին։

Digitized by Google

Դու ես միակ ճշմարտութիւն՝ և սիրելի նեղեալին ;
Դու բարեկամ մեղուցելոյն՝ քեզմով մեղքեր կը սրբուին։
Դու ես Հովիւ դուռն և կեանք՝ և յորդահոս ջրհոր լին,
Երբ հաւատով մենք քեզի գանք՝ մեր ծարաւներ շուտ
կ'անցնին ։
Դու ես միջնորդ և բարեխօս՝ քեզ հաւատով դիմողին,
Քո աչակերտք են միշտ ի յոյս՝ կան աղօթիւք ջերմագին։

Հանգիստ Եբր. Դ. 9

Աչքս տնկած ու շուարած՝ երբ փնտռեցի ես հանգիստ,
Եղան մարդիկ ինձի ըսած՝ հոս կայ հանգիստ հոս հանգիստ ։
Բայց իմ կեանք էր պէս պանդխտին՝ իբրև մի հիւր անհանգիստ,
Հոն կը հնչէր ձայն իմ սրտին՝ հոս չիք հանգիստ չիք հանգիստ։
Նեղութիւններ նաև վիշտեր՝ ըրին սիրտս անհանգիստ,
Եւ խօսեցան զիս խաբողներ՝ հոս կայ հանգիստ հոս հանգիստ։
Անապատ է այս աշխարհը՝ ոչ կայ անցաւ և հանգիստ,
Ամեն մէկը ունի ցաւ մը՝ հոս չիք հանգիստ չիք հանգիստ ։
Ի՞նչ անուշ է Տէր խոստումդ՝ ի Տէր ննջողք են Հանգիստ,
Հոն կը վայելեն օրհնութիւնդ՝ հոս կայ հանգիստ հոս հանգիստ։
Հոն ազատած իմ ցաւերէս՝ պիտի ըլլամ ես հանգիստ,
Զըլլայ խաբուիմ սոյն աշխարհէս՝ հոս չիք հանգիստ չիք հան-
գիստ ։
Հոն ցնծութեամբ պիտի երգեմ՝ սիրուն անունդ ով հանգիստ,
Հոն վայելմամբ պիտի ձայնեմ՝ հոս կայ հանգիստ հոս հանգիստ։

Վիմադիր տուն Մատթ. Է. 24–25

Վէմի վրայ է շինուած՝ հոգւոյս տունը հաստատուած,
Ապաստարան և իմ յոյս՝ է Փրկիչս Տէր Յիսուս,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական ։
Թէ կայծակներ շանթարկեն՝ թէ ահարկու ջուրք յորդեն,
Եւ ալ հովեր խիստ փչեն՝ վէմս անշարժ ապաւէն,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական ։
Է կեանք միակ իմ հոգւոյս՝ և իր արեամբ խրախոյս,
Վիշտք նեղութիւնք երբ ինձ'գայ՝ հոգիս Փրկչիս կը յուսայ,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական ։
Երբոր հնչէ ձայն փողոյն՝ պիտի դիմեմ իւր դիմոյն,
Նորին արեամբ լուացուած՝ պիտի ըլլամ սրբուած,

Digitized by Google

Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական։
Աշխարհի մէջ ի յերկին՝ Տէր իմ եղիր իմ բաժին,
Թէ և աշխարհ կործանի՝ եմ ապաստան քոյդ վէմի,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական։
Թէ և դէպքեր վախցնեն՝ թէ և ջուրեր ալեսեն,
Անշարժ է իմ չինուած՝ վէմին վրայ հաստատուած,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական։
Չի կայ բնաւ ինչ կայուն՝ որ միշտ մնայ մնայուն։
Ամեն իրեր տես կանցնին՝ Աստուած միակ իմ բաժին,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական։
Արդ խոնարհած սուրբ զոհին՝ և կաղաչեմ սրտագին,
Որ զիս վէմին հաստատէ՝ վտանգներէ ազատէ,
Տուն հիմնադիր անկործան՝ վէմս անշարժ փրկչական։

Ահա կուգամ Յայտ. ԻԲ. 12

Շուտ արթնցիր ով իմ հոգիս՝ լսէ ձայն մը կուգայ սրտիս,
Կըսէ ելիր ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Թէ ննդողներ ըզքեզ նեղեն՝ թէ թշնամիք չուրջդ պատեն,
Լեր համբերող ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Լեր ջանացող խոնարհ ուհեղ՝ Խաչդ առած էջ ասպարէզ,
Արիացիր ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Տէրունական սուրբ սեղանին՝ երբ մերձենաս սուրբ խորհրդին,
Մահս յիշէ ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Ցուսակտուր մի արտասուեր՝ երբ սիրելիքդ ննջեն ի Տէր,
Քաջալերուէ ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Մի՛ վհատիր սրտիւք թմրած՝ թէ յապաղի կառքդ այն անց,
Պատրաստուէ ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։
Երբոր դաղրին բազկիդ զարկեր՝ լոյսէ գրկին նաև աչքեր,
Տանիլ ասկէ ահա կուգամ՝ ես Փրկիչդ որ քեզ վարձք տամ։

Բաժանման վնասը Մատթ. ԺԲ. 25

Արիւն Յիսուսի սրբիչ է մեղաց՝ և է քաւութիւն ազգաց և ա-
զանց,
Զևերով կըսեմ որք անջատեցան՝ ազգութեան կապէն խզուած
հեռացան։
Որոնք կործեցին այսպէս զատուելով՝ սիրոյ բաղմանան և ա-
ճին հոգւով,

Digitized by Google

Ինչ ինչ ձևերու և ալ վէհերու՝ խաղեր խաղալով կեցան խըն-
կարկու։
Վերջ թշնամանօք իրար ներնգեցին՝ այսպէս վարուիլը օգուտ
սեպեցին,
Բոլորք բաժանմամբ իրարու տուած՝ սիրոյ աղբիւրէն եղան հե-
ռացած։
Կարդացին քարոզք բեմերու վրայ՝ մեր տունէն ի զատ փրկու-
թիւն չիկայ,
Այսպէս չեղեցան և ալ ծռեցան՝ ճշմարիտ ճամբէն ճշտիւ հե-
ռացան։

Հոգի. ժողով. ԺԲ. 7

Գոյութիւն հոգւոյ անուրանալի՝ յորմէ բուսականք նաև կեն-
դանիք,
Կ՚ամին կը մեծնան մէջ իւր սահմանի՝ նաև կը շարժին վայելելով
բարիք։
Իսկ անմահութիւնն տես ահա յայտնի՝ անյաղ ցանկութիւն
միշտ կայ ի մարդիկ։
Ի հունաւորէ անհուն չի ծնի՝ անհունն ծնի զայն անհուն վեհ
ծիրք։
Գոն անտես աչաց և մեզ չերևի՝ կրնանք մի ըսել չունինք մենք
խելք միտք,
Անտես է և զայն նկարիչ չունի՝ ո՛վ կրնայ ըսել է ցնորելիք։
Բայց վարձատրութիւն ցանկութեան սրտի՝ է վայելումն հոգ-
ւոյն այն բարիք,
Եւ ի զրկմանէ սիրտք մեր կը ճնշի՝ որմէ կը ծնի անհուն լի չարիք։

Ցիսուսի արիւնը մեզ կը սրբէ բոլոր մեղքերէն Ա. Յովհ. Ա. 7

Կեդրոն միութեան Ցիսուսի զոհը՝ օրէնքին գործքէն չէ քաւու-
թիւնը,
Որք ի Քրիստոս են սիրով հաւատով՝ են սրբուածներ տաճար
սուրբ հոգւով,
Տեսիր վտակներ կուղղեն կեդրոնին՝ նա միայն ջրհոր ծարաւեալ
սրտին,
Խաչին այն զոհին որոնք են դիմած՝ ի փրկութենէ չեղան զըրկ-
ուած։

Digitized by Google

Հաւատով արդարութեան Եբր. Ժ. 38։ Ամբակում Բ. 4

Աստուածային արդարութեան օրէնքը, Ելից Ի. 1–17 Բ. Օրինաց Ե. 6–21։
Օրէնքին անթերի պահանջումը, Յակոբ. Բ. 10–12։ Բ. Օրինաց ԻԷ. 26։
Անեծքը, Բ. Օրինաց ԻԸ. 15։ Գաղատ. Գ. 10։
Ստուերական քաւութեան արիւնը, Թուոց ԻԸ. 1–31, ԻԹ. 1–10։
Մէկ արդար մը չիկայ, Յովհ. ԺԴ. 1–3, ԾԳ. 1–3։ Հռովմ. Գ. 11–20։
Ամեն ալ դատապարտուած են, Հռովմ. Բ. 1–2։ Գաղատ. Ե. 19–20։
Աստուածային ողորմութեան շնորհքը, Հռովմ. Ը. 1–4 Գ. 21–24։
Թերութեանց ներողութիւնը, Ա. Յովհ. Բ. 1–2։ Ա. Տիմոթ Բ. 5։
Օրհնութիւնը, Հռովմ. Ա. 5–7։ Եփես. Ա. 1–13։
Իրական քաւութեան արիւնը, Եբր. Ժ. 12–14։ Ա. Յովհ. Ա. 7։
Դատապարտութենէ ազատիլը, Գաղատ. Գ. 1–29։ Եփես. Բ. 12–22։

Բովանդակութիւն Յակ. Բ. 19

Երթանք հաւատով Յիսուսի Փրկչին՝ ապաշաւելով ի մեղաց Ներքին,
Եւ մկրտութեամբ սուրբ աւազանին՝ Հոգւոյն շնորհօք կը ծընինք կրկին։
Մաքրինք ի սեղան սուրբ յիշատակի՝ փորձել մեր անձեր է պատուէր Նորին,
Արիւն է մեղաց արիւն Յիսուսին՝ որ հեղաւ խաչին մեղացս աշխարհին։
Զէ մեղ բաւական հաւատք մեր բերնին՝ և դեռ հաւատան որմէ կը սարսին,
Պարտինք կատարել կամքը Յիսուսին՝ հաւատով յուսով և սիրով սրտին։
Այս իսկ է պատուէր Աստուարանին՝ այս իսկ հրաւէր և ձայն երկնային,
Զբլայ մեզ ծռեն քարոզք մարդկային՝ տալով մեզ դասեր ծնունդք մտային։

Digitized by Google

Գողգոթա Ցավք. Զ. 26

Գողգոթային խաչին առջև՝ արդ խոնարհինք ծնրադրած,
Ուր կը սրբի մեր մեղքը սև՝ զոհին արեամբ լուացուած։
Հոս նայողներ կը բժշկին՝ մեղաց խոցէն ըռնդցած,
Հոս դիմողներ կը մաքրուին՝ մեղաց աղտէն սրբուած։
Հոս կայ միայն հանգստութիւն՝ ծանրաբեռին այն հոգնած,
Հոս կը վայելենք թեթևութիւն՝ որ կը շնորհէ Հայր գթած։
Երբոր իջնենք անկէ ի վայր՝ երկրպագել առ Աստուած,
Պիտի տեսնենք ձև ու նկար՝ են մտային արարուած։
Ալ քաշքշուկ մէկդի մնան՝ չիտակ երթանք առ խաչուած,
Բաւ է մեզի կենաց սուրբ բան՝ հաց է նա մեզ պարգևած։
Մի է հաւատք մկրտութիւն՝ մի է Տէրը մեր Աստուած,
Արեամբ Փրկչին կայ սրբութիւն՝ երկնից ներքև մեզ տրուած։
Հոս այլ և այլ մեկնութիւններ՝ չիկան երբէք ձևացած,
Հոս պէտք հաւատք նաև յոյս սէր՝ հոս մնտենանք խոնարհած։
Թէև անթիւ կան բաժանմունք՝ Գողգոթայէն չեն սորված,
Եկեղեցեաց է այս վիճմունք՝ հաց և ձուկի խնդրուած։
Զգենք մէկդի այն արտաքին՝ սուր նետերը է հարուած,
Ներենք իրար սիրով Փրկչին՝ ըլլանք սիրով միացած։
Են քարոզիչք կը քաշքշեն՝ գառնուկները մոլորած,
Կան և քիչ են կը քարոզեն՝ բաժանումներ անարգած։
Էր երանի՛ ըլլայինք մենք՝ կենաց բանէն միշտ սորուած,
Էր երանի՛ ըլլայինք մենք՝ խաչին դասէն դաս սորուած։

Խորհուրդ Ցակ. Դ. 1–4

Խորհուրդ կըսեն այն բանին՝ ուր կայ պահուած գաղտ-
նութիւն,
Եթէ չիկայ հոն գաղտնիք՝ անմտական մանկութիւն։
Մինն թաղած մինն կանգնած՝ մին սրսկմամբ մկրտէ,
Սոյն խորհուրդը ամեն ոք՝ ըստ իւր դատման կը ձևէ։
Մինն կըսէ մկրտութիւն՝ կնիք վերին ծննդեան,
Միւս կըսէ ոչ այլ ինչէ՝ թլփատութեան է նշան։
Մինն տեսիր հաց կը շաղէ՝ խմորաղուրկ ալիւրով,
Իսկ միւսը հաց կը շաղէ՝ խմորաղիր ալիւրով։
Մինն նաև բաժակին մէջ՝ ջուր կը դնէ ցրտացած,
Իսկ միւսը ջուր կը դնէ՝ քիչ մը զանի տաքցուցած։

Digitized by Google

Մինն կըսէ գոյակոխեալ՝ է իսկական սուրբ մարմին,
Իսկ միւսը է նշանակ՝ կըսէ հացը ու գինին։
Այսպէս իրար հակադիր՝ եկեղեցին պառակտած,
Այլայլեցին ամեն իր՝ ընդ անիծիւք դրոշմած։
Սոյնանման շատ մը բան՝ զարդարելու խորհրդով,
Եկեղեցին բաժնեցին՝ թշնամական ներդերով։
Ինչ ինչ իրեր քաշքշած՝ մտաւ մէջը անջատում,
Այսպէս տուներ բաժնուած՝ իրար տուին գլորում։
Բաժնուելով իրարմէ՝ տուին իրար անարգանք,
Կործանեցան ցրուեցան՝ թշնամացան այն համայնք։
Իմ սիրելիք հեռացէք՝ սոյն վեճերէն դուք այս օր,
Որ ստանաք մխիթարն՝ զոր կորուսիք մինչ այս օր։
Երթանք կարդալ սուրբ գիրքը՝ նա օրինակ մեզ կուտայ,
Եւ չ'ելնինք այն ճամբէն՝ կան Առաքեալք մեզ վկայ։
Տես սուրբ գիրքը մեզ կըսէ՝ և կը մնայ հետևինք,
Չէ թէ մարդոց ըսուածքին՝ կարծիքներու մէջ ծռինք։
Ցարանուանեալ անուններ՝ են մարմնաւորք ըստ գրոց,
Նաև կըսեմ բաժանում՝ է ներդութեան մեծ խորոց։

Անճնանուիրութիւն Հռովմ. Ը. 35-39

Աշխարհիս մէջ ո՛վ որ կուզէ Աստուածապաշտ ապրելու,
Թող խաչն առնէ յետ Յիսուսի չարչարանոք քալելու,
Քիչք բարեկամք շատ թշնամիք տես հալածեն ամեն օր,
Նախատինքներ և զրկումներ միշտ կը թափեն նորանոր։

Թէև անուշ Տէրոջ խօսքեր բայց աշխարհի ատելի,
Թէև անուշ Տէրոջ պատուէր չարագործին մերժելի,
Նայէ ո՛վ Հայր դու երկինքէն քեզ սիրողին սիրտ ցաւեր,
Որ կը տանջի տկարութեամբ որոյ բաժին կայ լացեր։

Թէ կայ հնար թող այս բաժակ անցնի ինձմէ զթօրէն,
Թէ ոչ ո՛վ Հայր քու կամքդ ըլլայ որ ես միակ տնօրէն,
Դուն քու զաւկիդ կուտաս ցաւեր որ փորձուած ընտրուի,
Դուն քու զաւկիդ կուտաս խաչեր համբերութեամբ կրթուի։

Հնազանդած կը խոստանամ չը բաժնուիլ քու սէրէդ,
Ոչ հալածանք ոչ տառապանք պիտի զատեն քու խաչէդ,
Եւ ոչ ալ մահ և ոչ աշխարհ պիտի բաժնեն զիս Փրկիչ,
Հոգիս մարմինս քեզ կը զոհեմ անմահութեամբ աղատիչ։

Digitized by Google

Ես չեմ կարող հաւատարիմ խոստմանս մէջ մնալու,
Միայն Հոգւոյդ սուրբ շնորհքը կը վստահիմ կենալու,
Շնորհէ՛ ով Հայր չուննամ պարծանք բաց ի խաչին այն
պոհէն,
Շնորհէ՛ ով Հայր որ համբերեմ ցաւոց վշտաց համօրէն։

Հայաստանեայց սուրբ Առաքելական Եկեղեցին կընդունի մանկամկրտութիւնը, կնքահօր դաւանութիւնը, թաղելով ի Ջուր, մեղաց թողութիւնը, և վերածնիլն ի Հոգւոյն Սրբոյ։

Երիցականը կընդունի, մանկամկրտութիւնը, ծնողաց դաւանութիւնը, ջրով սրսկումը, ոչ մեղաց թողութիւնը, այլ իբրև նշան թլփատութեան կը համարի։

Ոչ մանկամկրտիչեանք, կընդունին, խելահասից մըկրտութիւնը, ինքնադաւանութեամբ, թաղելով ի Ջուր, մեղաց թողութիւնը, վերածնիլ ի Հոգւոյն Սրբոյ, նախ և ապա։

Պառակտումն Եկեղեցւոյ Ա. Տիմոթ. Զ. 10

Քրիստոնէական Սուրբ Եկեղեցին երբ միութեամբ էր,
Հարք ինչ որ գրեցին նաև ալ ըսին անկեղծութեամբ էր;
Բայց ետքէն եկողք երբ բաժնուեցան տուին մեծ աւեր,
Եւ այլայլեցին բացին չահերու և փառաց դռներ։
Աթոռներ ձևեր և առաջնութեան շատ մը կռիւներ,
Տիրապետելու նախագահութեամբ իշխանութիւններ,
Այսպէս իրարու տուին նենգութեամբ խստիւ հարուածներ,
Զարին հետևած մթութեան հոգւով եղան դեսպաններ։
Ո՞ւր էր Յիսուսի սիրով կտակած սիրոյ սուրբ պատուէր,
Ո՞ւր էր միութիւն՝ ուր էր սրբութիւն երկնային ձիրքեր,
Մէկդի ձգելով ելան պաշտելու ոսկի արծաթներ,
Որով չեղեցին նաև ծռեցին կենաց պատգամներ։

Digitized by Google

Տեսիր մոլորած մարդիկ ընթացան դէպ ի խոր մութեր,
Փառասէր սրտիւ նախագահեցին ստութեան հայրեր,
Եւ արդիլեցին կարդալ սուրբ գրոց լուսատու մասեր,
Որով չերևին չարեօք գործուած իրենց այն վատեր։
Եթէ այս այսպէս ճգէ դու զանոնք գնա առաջներ,
Քալէ նախնոյն մէջ լի ճշմարտութեամբ եղիր պտղաբեր,
Պահէ աւանդը սրտի սրբութեամբ հաւատ, յոյս, ըզ սէր,
Որով վայելես պսակն կենաց Տէրն է պատրաստեր։
Սուրբ Աւետարան է մեզ ուղեցոյց շնորհք երկնաբեր,
Ցորում կատարեալ կան գրոշմուած կենաց խսկ պատուէր,
Բայց յարանուոնեալք ունին առաջնորդ կարծիք մտաբեր,
Որով են շեղեալք նաև բաժանեալք իրար նենգողներ։

Աղօթք միութեան Յովհ. ԺԷ. 21–23

Ո՛վ սուրբ Հայր՝ սիրեցիր մեզ, և մեր փրկութեանը համար քու միածին սիրելի որդիդ Յիսուս Քրիստոսը հաճեցար խաչին յանձնելու և անալ հոգւով յօժարած համբերեց խաչին ցաւոց, որ իր խոցերովը բժշկէ զմեզ, և մեղաց դատապարտութենէ ալ ազատէ։

Արդ այս ամեն շնորհացդ համար խոնարհած կաղաչենք ո՛վ սուրբ Հայր, հիմայ բարեհաճէ՛ ևս տալ մեզի՝ սիրոյ միութիւնը, Հոգւոյն սուրը, սերմին պտղարերութիւնը, Աւետարանի պատուիրանաց հնազանդութիւնը, որով որդեգրութեան շնորհացը արժանացած հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւն մատուցանենք քեզ սուրբ Հօրդ, և միածին Որդւոյդ, և կենդանարար սուրբ Հոգւոյդ հիմայ ու միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Digitized by Google

ԴԱՐԱԿԱՆ ԾՆՈՒՆԴՔ

Ըստ Եկեղեցական Պատմութեանց վախճանած այն նշանաւոր եւ ժամանակակից հայրերին մէն մի անուն նշանակած եմ թուականաւ ի վկայութիւն:

Ա. դար

Յարութեան և Հոգեգալստեան տօները կային:

Բ. դար

Էր պարզ Ս. Պօղիկարպոս, 170,

Գ. դար

Մանկամիրտութիւն վէճի տակ, ծոմ պահքի փոխուած, եկեղեցական աստիճաններ, Մեռոնել օծել: Տէրտուղիանոս, 216:

Դ. դար

Եկեղեցական լաթեր, Աւագ ուրբաթ, Քրիստոսի ծննդեան տօն, մարտիրոսաց և հրեշտակաց տօն, խաչին մեծարանք, ննջեցելոց աղօթք, ուխտագնացութիւն, մասանց յարգութիւն տալ, խնկել և կանթեղ վառել: Աթանաս 371:

Ե. դար

Սուրբ Կոյսի վերափոխման տօն, Նզովքի ճոխութիւն եկեղեցիս: Ոսկեբերան 449:

Զ. դար

Առաքելոց տօն, Սուրբ Կոյսի անարատութեան տօն, Աւետման տօն և Ջուր օրհնել: Գրիգոր մեծ 604:

Է. դար

Սուրբ Կոյսի ծննդեան տօն: Անանիայ վարդապետ 602,

Ը. դար

Պատկերաց յարգութիւն, ի Հայս Ա. դար ըստ Խորենացւոյն դաստառակ Քրիստոսի: Յօհան Օձնեցի 705:

Digitized by Google

Թ. դար

Եկեղեցականները օծել։ Յոհաննէս Դամասկացի 860։

ԺԱ. դար

Կուսակրօնութիւն ուխտիւք, կար նաև ի նախնիս։
Գրիգոր Նարեկացի 1003

ԺԲ. դար

Սուրբ Կոյսի յղութեան տօն, և եօթ խորհրդոց դասակարգութիւնք որք ի Սուրբ Գիրս նշանակուած էին, կար իսկզբան։
Ներսէս Շնորհալի 1193։

ԺԳ. դար

Քահանայից խոստովանութիւն, և հաղորդութեան մեծարանք։ Մեծն Վարդան 1220։

ԺԴ. դար

Սուրբ Կոյսի այցելութեան Եղիսաբեթի տօն։
Նիքօլա տէ լիրա 1380։

Հայք՝ նախկին երեք ընդհանրական ժողովները կընդունին, և ազգային ժողովներ ալ ունին։

Յոյնք՝ եօթը ընդհանրական ժողով կընդունին, և ազգային ժողովներ ալ ունին։

Հռովմէականք՝ որչափ որ ուզեն ժողովներ ունին, բացէ դուռը։

Բողոքականներէն կան՝ մինչ չորս ժողովը կընդունին։

Են՝ յետագայ ժողովներն չեն ընդունիր՝ բայց նոյն ժողովոց վճիռներէն մասամբ մը կընդունին։

Մէկը հիմա ճշմարտութիւնը գտնելու համար պէտք է հետեւիլ սուրբ գրոց փաստին։

Ինչպէս շարականները դարերու գրուածք են՝ նմանապէս աւելուածներն դարերու արդիւնք են։

Digitized by Google

ԿԵՆԱՑ ՃԱՄԲԱՆ

Ես եմ ճանբան ու ճշմարտութիւն եւ կեանքը

Խաչին քաւութեան փրկարար Զոհը՝ տուաւ զայս կտակ իր աշակերտաց,
Երթալ քարոզել Աւետարանը՝ նաև մկրտել նոցա պատուիրեաց։

Կենաց ճամբան մտած՝ ես ապաշխարելով,

Զգուելի մեղացդ վրայ զղջալով, և դարձած՝ ես Աստուծոյ պատուիրանացը հնազանդելով նեղ դռնէն ներս մտնելու որ քեզ յաւիտենական կենաց ճամբան կը տանի, Մ։ Ե։ 14։ Յ։ Դ։ 7-10։

Կենաց ճամբան մտած՝ ես հաւատալով,

Աստուծոյ Որդւոյն անունին, որ է միակ փրկիչ աշխարհիս և ուրիշ մէկով չիկայ փրկութիւն, քանզի անկէ զատ չիկայ այլ անուն երկնից տակը մարդոց տրուած, որ կարող ըլլանք փրկուելու, Գ։ Դ։ 12։

Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզ թէ՝ ով որ կըլսէ իմ խօսքը և կը հաւատայ նորա որ զիս խրկեց, ունի յաւիտենական կեանք, և դատապարտութեան տակ չէ՝ նար այլ՝ մահուանէ ի կեանս փոխուած է, Յ։Ա։ Ե։ 24։

Կենաց ճանբան մտած՝ ես մկրտուելով,

Թաղմամբ կնքուելու Հօր՝ և Որդւոյ՝ և սուրբ Հոգւոյն անունովը, որ է նախադուռն ի կտակի Համբարձման փրկչին տեսանելի անդամակցութեան և որդեգրութեան Քրիստոսի Եկեղեցւոյն ի հնազանդութիւն, Մ։ Ի։ 16։

Եթէ այս կերպով ապաշխարած՝, հաւատացած՝ և մկրտուած՝ ես կենաց ճամբան մտած՝ ես, ըստ վկայութեան և քարոզութեան մետասան առաքելոց, որով մեղացդ թողութիւն և սուրբ Հոգւոյն պարգևը առած՝ ես, Գ։ Բ։ 14։ 37։ 39։

Digitized by Google

Նախ ապաշխարել հաւատով Փրկչին տուին պատուիրան,
Ի Ջուր իջնելով ըստ Եթովպացւոյն օրինակութեան,
Այսպէս ուսուցին մեր մեզաց ներում Հօրէն գթութեան,
Որ առնենք շնորհք Հոգւոյն պարգևօք վերածնութեան։
Տեսիր սոյն կարգը սուրբ Առաքելոց բանիւ միարան,
Հոն Պետրոս կայնած քարոզեց ձայնիւ լսող լուզմութեան,
Ապաշխարեցէ՛ք և հաւատացէ՛ք ի մկրտութեան,
Որով վայելէք մեզաց թողութիւն Հոգին սրբութեան։
Մեր մեղաց ներող չէ մկրտութիւն՝ է զոհն փրկութեան,
Զի արիւն Փրկչին է ներող մեղաց կեղրոն մի միայն,
Սոյն մանեակք միջոցք պարտիք են ի մեզ հնազանդութեան,
Այսպէս կատարած կըլլանք որդեգիր Հօրն ողորմութեան։
Ո՛չ թէ սրսկումն ոչ անապաշխար՝ այլ դաւանական,
Շրթաբեր ձայնիւ մնալ հաւատով լինիլ խոստովան,
Այսպէս կը խօսի կենաց պատգամը սուրբ Աւետարան,
Կը կանչէ մեզի հաւատալ Փրկչին մտնել Աւազան։

Քրիստոնէական ներքին սուրբ կրօնք

Է հաւատալ ի միութիւնն Աստուծոյ, և Հօրն ողորմութեան շնորհացն,
Է հաւատալ Յիսուսի փրկագործութեան խաչին արդեանց շնորհացն,
Է հաւատալ սուրբ Հոգւոյն ներգործիչ և սրբացուցիչ շնորհացն։
Եւ այսպէս երկրպագել նոցա միշտ հոգւով և ճշմարտութեամբ,
Սուրբ սրտիւ՝ անկեղծ հաւատով՝ սիրոյ պտղաբերութեամբ,
Յարատևելով ի կէտ կոչման վերին մրցանակին սրբութեամբ։

Այս իսկ է ներքին սուրբ կրօն

Իսկայլ Եկեղեցական դրութիւնք, են արտաքին և մտային
Որք խրերու, կերպերու, ձևերու, վրայ տես կը վիճին,
Որմէ առաջ եկած է անթիւ բաժանումներ
Հիմայ ալ կան շատ մը յարանուանական անուններ,
Ամեն մէկը իրենը հաստատելու ջանիք կը փութայ
Վարդապետական քաշքշումներն եղած է առարկայ։

Digitized by Google

Որոնք իրարու այսպէս կըսեն «Անոնք մեզմէ չէին, թէ որ մեզմէ ըլլային մեր քով կը մնային, սակայն յայտնի կըլլայ որ մեզմէ չեն» Ա. Յովհ. Բ. 19։

Ա՛հ սիրոյ և միութեան վարդապետին դասը
Ատելութեան և բաժանման խորոց եղած է,
Երկնային սրբութեան հոգևոր այն կեանքը
Մարմնաւոր վէճերու առարկայ եղած է։

Վարդապետական երեք բանալին է

Նկարագրապէս, Այլաբանապէս, Խորհրդապէս

Հին կտակարանի եկեղեցին ուներ նկարագրական արարողութիւն և ձեւ,
Բայց նորը չունենալով ըստ նոյն օրինակի արարողութիւն և ձեւ,
Ամեն մէկ եկեղեցի, ունի իւր Հայրապետ հիմնադիրը,
Ի մասին արտաքին ձևակերպեալ կարգադրութեանը։
Առաքեալք մի միայն Քրիստոս Փրկիչ աշխարհի քարոզեցին և ոչ թէ,
Ձեւ ու արարողութիւն, Աւետարանի պատուերը «անհատական է»
Ամեն հաւատացելոց կը խօսի, նա սրտին Աստուածպաշտութիւնը կը խնդրէ,
Հաւատք սիրով միացած թէ առ Աստուած և թէ առ մարդիկ։
Մի բան՝ Աւետարանը է սրտի կրօն, նա սրտին խորանը, սրտին զարդը
Կը խնդրէ, արտաքին ձևերու հետևողը ունի դաս ձևական,
Իսկ ներքինին հետևողը, ունի դաս հոգևոր և անմահական։

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Ո՞ւր պէտք է դիմենք «Յաւիտենական կեանքը» ստանալու համար։

Պ. Մի միայն Փրկչին Յիսուսի Քրիստոսի։
Ասիկայ է ճշմարիտ Աստուած և յաւիտենական կեանքը, Յովհ. Ե. 20։

Digitized by Google

Հ. Ինչպէս դիմելու ենք,

Պ. Հաւատալով անոր։

Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը անոր Որդւոյն մէջն է, ան որ Որդին ընդունած է կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ կեանք չունի, Յովհ. Ե. 10–11։

Հ. Բաւական է մի՞ մի միայն հաւատքը,

Պ. Ո՛չ, այլ պարտաւորեն ք նորա խօսքերուն մտադիր ըլլալու։ Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզի թէ՝ ան որ իմ խօսքս մտիկ կընէ, և կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի ու դատապարտութեան տակ չէնար, այլ մահուանէ դէպ ի կեանքը անցած է, Յովհ. Ե. 24։

Հ. Ո՞ւր գտնենք Քրիստոսի խօսքը,

Պ. Աւետարանին մէջ, Գործք. Ա. 6–8։

Հ. Ո՞րն էր ի համբարձման Առաքեալներուն վերջին ապաստարանը,

Պ. Գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք և մկրտեցէք զանոնք։ յԱնուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ, և սորվեցուցէք անոնց ան ամեն բաները որ պահեն, ինչ որ ես ձեզի պատուիրեցի, Մատթ. ԻԸ. 19–20։

Հ. Ինչէ՞ աշակերտիլը,

Պ. Է համակերպիլ Քրիստոսի դասերուն և արդեամբ կատարել զանոնք,

Ամեն անոնք որ Քրիստոսի վարդապետութեան մէջ չեն կենար անոնք Աստուած չունին, Բ. Յովհ. Ա. 9։ Բ. Թեսաղ. Ա. 8–10։

ԿԱՏԱՐԵԱԼ ՍՐԲՈՒԹԻՒՆ

Եւ անոր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի արիւնը կը սրբէ զմեզ ամեն մեղքէ Ա. Յովհ. Ա. 7։

Այս մեղաւոր աշխարհիս մէջ, այս խօսքը ճշմարիտ և ամենայն ընդունելութեան արժանի է, և անուշ ձայն, և

Digitized by Google

կատարեալ ոփոփանք մի է, ինչպէս մարմնոյ մաքրութիւնը ջրով կըլլայ, նոյնպէս Հոգւոյն մաքրութիւնը Յիսուսի սրբացուցիչ արեամբը կըլլայ, ինչու որ անիկայ միակ պատարագ և ամենաբաւական սրբիչ, հին օրինաց մէջ կենդանեաց արեան սրսկումը՝ էր օրինակ Գառին Աստուծոյ, որ աշխարհիս մեղայը համար ոլիտի թափուեր, ուստի մի միայն Յիսուսի արիւնը՝ կը սրբէ զմեզ ամենայն մեղքէ։

Քանզի Յիսուսի արիւնը՝ Աստուծոյ Որդւոյն արիւնն է, ոչ օրինօք եղած արդարութեամբը կը սրբէ, այլ շնորհաց արդեամբը զմեզ ամեն մեղքէ կը սրբացնէ։

Հին տեսութեան ստուերական սրբութիւնը, էր օրինակութիւն, բայց ճշմարիտ իրական սրբութիւնը Աստով կըլլայ։

Աստուծոյ ժողովրդեան Աստվ փրկութիւն կը քարոզուի, ասիկայ է միակ որ զմեզ ամեն մեղքէ կը սրբէ, թէ որ ըսենք մենք թէ մեղք չունինք կը խաբենք զմեզ, և մեր մէջ ճշմարտութիւն չիկայ։ Սուրբ Գիրք մեզ կը պատկերէ մեղաւոր ըլլալնիս, ամեն վիճակաւ թէ ծնողապէս և թէ գործնապէս, և թէ անկեալ վիճակի ենթակայ ըլլալնիս։ Եւ կը յուսայնէ մեզ թէ՝ մեր մեղքը ծովի ջուրի նման ալ շատ ըլլայ, Յիսուսի արիւնը մեզ ամեն մեղքէ սրբելու զօրութիւնը ունի։

Տեսէք որչափ անսահման սրբացուցիչ է Յիսուսի արիւնը որ զմեզ ամեն մեղքէ կը սրբէ։ Բաւ է՝ որ դիմենք Յիսուսի արեանը և խնդրենք հաւատով մեր մեղաց սրբութիւնը, և նորոգուած շնորհօք սուրբ Հոգւոյն լինինք նոր մարդ և նոր արարած։

Զիկայ մի արդար Հռովմ. Գ. 10–12

Զիկայ բնաւ մի արդար, այս աշխարհէս ճամբորդած,
Զիկայ բնաւ մի սուրբ մարդ, անարծութեամբ կեանք վարած։
Նախածնողքէն մինչ այն վերջ, ամենք մեղքով են շաղուած,
Ո՞ք կը պարծին ըսելու, թէ են մաքուրը սրբուած։
Օրենք մեզնէ միշտ կուզէ, ամբողջութեամբ պահելու,
Նաև խստիւ կը վճռէ, կուտայ անէծք ահարկու։

Digitized by Google

Եթէ այսպէս ուրեմն, ամեն մարդիկ կան մեղք,
Միայն կեանք կայ այն փրկչէն, և փրկութիւն շնորհօք։
Նա թափելով իր արիւն, մեզ անէծքէն ազատեց,
Շնորհելով սրբութիւն, կենաց հոգին պարգևեց։
Ո՞վ օրենքին կրթնած, կրնայ ըսել խորհելով,
Զունի նա մեղք գործուած, է սրբուած ինքն իրմով։
Ո՛չ ոք կրնայ ըսելու, միայն փրկչին սուրբ արիւն,
Կրնայ սրտէն լուալու, մեր մեղքերը սևագոյն։
Արդ մօտենանք սուրբ խաչին, մեծ հաւատքով խոնարհած,
Խնդրենք ներում մեր մեղքին, և զհոգին շնորհաց։

Երկնային շնորհք

Ան երկնային սուրբ շնորհքը՝ շնորհէ մեզի ով Հայր,
Եւ սուրբ Հոգւոյն պարգևները՝ շնորհէ մեզի ով Հայր,
Շնորհէ, շնորհէ, շնորհէ մեզի ով Հայր։

Կենաց բանին խոստումները՝ շնորհէ մեզի ով Հայր,
Որով վայելենք փրկութիւնը՝ շնորհէ մեզի ով Հայր,
Շնորհէ, շնորհէ, շնորհէ մեզի ով Հայր։

Վերածնող սրբութիւնը՝ շնորհէ մեզի ով Հայր,
Հաքնինք երկնից նորութիւնը՝ շնորհէ մեզի ով Հայր,
Շնորհէ, շնորհէ, շնորհէ մեզի ով Հայր։

Աղօթք առաւօտեան

Ո՛վ Ամենակալ ամենամեծդ Աստուած, որ այս առաւտուան աղօթքը ու բանաւոր պաշտօնը քու անապական և երկնային խորանիդ մէջ ընդունէ, և ծադէ մեր վրայ արդարութեան և իմաստութեան լոյսդ, մեզ լուսոյ որդի ըրէ ցերեկուան որդի, որպէս զի գալիք օրերնուս մէջ մեր կեանքը քու վախովդ անցնենք, և մեր ընթացքը առանց դայթակղութեան կատարենք, ինչու որ դուն ես մեր օգնականը ու փրկիչը ու քեզի կը վայելէ փառքը պատիւը և իշխանութիւնը հիմայ ու միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն

Digitized by Google

Աղօթք գիշերային

Ո՛վ բարեաց պարգևող և աղբիւր խաղաղութեան սուրբ Հոգիդ Աստուած ճշմարիտ, այս գիշերուան մէջ մեր միտքը ու խորհրդները ամեն տեսակ դիւական խռովութենէ խաղաղացուր, որպէս զի քու շնորհքովդ անցաւոր կեանքէս առաջնորդուած հասնինք երկնից խաղաղաւէտ օթևանները, ուր փառաւորելու Հայր և Որդին և զսուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

Աղօթք հանգստեան, կիրակի

Շնորհակալ ենք քեզմէ՝ ո՛վ յաւիտենական սուրբ Հայր, որ մեզ կրկին այս սուրբ հանգստեան օրուանը հասուցած՝ միութեամբ քու սուրբ ներկայութեանդ գալու և արժանի կերպիւ քեզ մեր երկրպագութիւնները մատուցանելու մեզ արտօնութիւն շնորհեցիր։ Բայց ո՛վ Տէր մեր շրթունքները՝ որ մեր գոհաբանութիւններն ու խնդրուածները հոգւով և ճշմարտութեամբ քեզ մատուցանենք, բայց՝ նաև մեր ականջները որ քու սուրբ խօսքերէդ այսօր մեր լսածն ու սորվածը հնազանդութեամբ կատարելու փութանք, և յօժարած վաղենք դէպ ի մրցանակին վայելմանը, այս ամենը կը խնդրենք Յիսուսի Քրիստոսի մեր Փրկչին սիրուն անուամբը, Ամէն։

Աղօթք միւռեան

Ո՛վ բարեգութ երկնաւոր սուրբ Հայր՝ կաղաչենք շնորհէ մեզ այսօր քու խօսքերէդ մեր լսածներն ու սորվածները իբրև ծառ պտղաբեր արմատ կապած մեր սրտերուն մէջ պտղաբերի շնորհօք սուրբ Հոգւոյն, օրհնէ՛ սոյն միութիւնը որ ճշմարտութեան և սրբութեան մէջ յարատևէ։ Օրհնէ՛ որ յառաջադիմէ միութեան կապ եղած սիրոյ մէջ։ Նաև օրհնէ՛ որպիսական հնազանդութեամբ քեզ միայն ի սրտէ ծառայէ, և այսպէս ողորմու-

Digitized by Google

թեան շնորհացդ արժանացած, փառաւորէ միշտ Հայրը՝ ու Որդին և սուրբ Հոգին, հիմայ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

Աղօթք զոհաբանական

Կը գոհանանք քեզմէ ով Հայր գթութեան և Աստուած ամենայն ողորմութեան և մխիթարութեան, որ մեզ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի քու սիրելի Որդւոյդ անգին սուրբ արեամբը արդարացուցիր։ Կը գոհանանք քեզմէ՝ որ մեզ տաճար և բնակարան ըրած, շնորհաբուխ սուրբ Հոգիդ մեր մէջ բնակեցնելոյ արժանացուցիր։

Կը գոհանանք քեզմէ՝ որ մեզ սիրոյդ անճառելի բարերարութիւններովն ճոխացուցիր։ Կը գոհանանք դարձեալ ով սուրբ Հայր որ այս սուրբ հանգստութեանդ օրուանը մէջ շնորհացդ աթոռին առջին ներկայանալու և դարձեալ մեզի պէտք եղած ողորմութիւնը խնդրելու մեզ արտօնութիւն շնորհեցիր։ Արդ կաղաչենք ով սուրբ Հայր մեզ ճշմարիտ Որթին ճիւղերը ըրէ, և սրբէ զանոնք որ առատապէս սուրբ Հոգւոյն պտուղներովն շատանայ, հաստատէ՛ զմեզ այն անկործան յաւիտենական վէմին վրայ, որ որևէ վտանգներէ զերծ մնանք հաւատոյ, յուսոյ և սիրոյ պատուիրանաց հնազանդութեան մէջ յաջողուինք, և յետ այսմ կենաց, քու գիրկդ խնալով վայելենք յաւիտենական Հայրական սուրբ օրհնութիւնդ Ամէն։

Աղօթք խաղաղութեան

Քու խաղաղութիւնովդ ով Քրիստոս մեր Փրկիչը, որ միտքերէ ու խօսքերէ խիստ վեր է, ամրացուր մեզի, և առանց վախի պահէ՛ ամեն չարիքներէն, միացուր մեզի քու ճշմարիտ երկրպագողներուն կարգին մէջ, որոնք հոգիով և ճշմարտութիւնով քեզի երկրպագութիւն կը մատուցանեն, ինչու որ ամենասուրբ երրորդութեանդ կը վայելէ փառքը իշխանութիւնը հիմայ ու միշտ յաւիտեան, Ամէն։

Digitized by Google

Անքննելի անհասանելի երեք ինքնութեանդ հաստատող ընդունող և անբաժանելի միացեալ սուրբ Երրորդութեանդ կը վայելէ փառքը իշխանութիւնը ու պատիւը յաւիտեանս ամէն։

Օրհնութիւն Հօր

Դուն կ'օրհնենս զանունք, որունք որ կ'օրհնեն քեզի ով Տէր, և կը սրբես քեզ յուսացողները, ապրեցուր քու ժողովուրդդ և օրհնէ քու ժառանգութիւնդ, պահէ՛ եկեղեցւոյ ամբողջութիւնը, սրբէ զանունք՝ որունք որ ողջունեցին սիրով քու տանդ վայելչութիւնը, փառաւորէ՛ դուն մեզի քու. Աստուածային զօրութիւնովդ, և մի թողուր քեզի յուսացողները, շնորհէ քու խաղաղութիւնդ բոլոր աշխարհի եկեղեցիներու, քահանաներու քրիստոնեայ թագաւորներու, և նոցա զինուորած զաւկներու ու բոլոր ժողովրդեան, ինչու որ բոլոր բարի տուրքերը և բոլոր կատարեալ պարգևները վերէն քեզմէ են իջած որ ես լուսոյ Հայրը, ու քեզի կը վայելէ փառքը իշխանութիւնը ու պատիւը յաւիտեանս, Ամէն

Օրէնքին ու մարգարեներուն կատարումը դուն ես ով Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցուցիր Հայրական քու բոլոր տնօրէնութիւնդ, լեցուր մեզ ալ քու սուրբ Հոգիովդ։

Եկեղեցին Հայաստանեայց որչափ մօտ է պատկերիս
Է լաւագոյն և համեմատ Աստուածաշունչ մատենիս,
Առ կշիռը կշռէ իրեր ճշտիւ քննէ փորձելով
Թէ որ տեսնես նմանատիպ յայժամ պատուէ՛ յարգելով։
Եկեղեցեայց տարբերութիւնք կը պատկերէն մեզ ձևեր
Մէկ է հիմը տես չինուածքներ ունին տարբեր չուք զարդեր,
Սիրով նախնիք զարդարեցին իրրև պատիւ երախտեաց
Վայելչութիւն ի մեծարանս Աստուածային սուրբ փառաց։
Իւր պարզութիւն նախադասէ քան այլ և այլ եկեղեցիս,
Իսկ ի հաւատս չիք խառնութիւն կը պատկերէ հայելիս։

Digitized by Google

Ջրով եղած մկրտութիւնը շնորհիւ սուրբ Հոգւոյն որտին մաքրութիւնը կը պահանջէ։

Դրոշմը դաւանութեամբ Քրիստոնէական անունը մեզ կ'օծէ։

Ապաշխարութիւնը սրբութեամբ ապրելու մեզ կ'առաջնորդէ զղջմամբ սրտի։

Հաղորդութիւնը հաւատով մեզ Քրիստոսի հետ միանալու կը կապէ։

Ձեռնադրութիւնը պաշտօնական յատկութիւնը կը պատկերէ։

Ամուսնութիւնը Քրիստոսի եկեղեցւոյն հետ ունեցած սէրը կ'օրինակէ։

Վերջին օծումը աղօթիւք և հաւատով ներելի մեղքերը կը սրբէ։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Կը հաւատայ Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. մի Աստուածութեան։

Կը հաւատայ Քրիստոսի մարդեղութեամբ, ծննդեամբ, խաչելութեամբ, թաղմամբ, յարութեամբ, համբարձմամբը և համայն տնօրէնութեանցն։ Հօր Աստուծոյ աջ կողմն նստելուն, բարեխօսութեամբ և մէջնորդութեամբ և մի միայն փրկիչ ըլլալուն։

Կը հաւատայ սուրբ Հոգւոյն անեղ և կատարեալ ըլլալուն, որ կը սրբացնէ ճշմարիտ հաւատացելոց որտերը, և կը լուսաւորէ մտքերը դէպ ի Քրիստոսի գիտութեան լուսոյն դիմելու։

Խաչին զոհը աշխարհիս մի միայն փրկութիւնը կը քարոզէ, կընդունի մկրտութեան խորհուրդը երբև առաջին Քրիստոնէական եկեղեցւոյն անդամակցութեան դուռն, և ազատութիւն ի նախահօրն մեղաց. կը կատարէ ջրով թաղմամբ և ամենասուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն անուամբը երիցս թաղելով ի ջուր, որով

Digitized by Google

կընդունուի մկրտեալը յորդեգրութիւն Հօրն երկնաւորի սրբեալ ի մեղաց և զշնորհս Հոգւոյն սրբոյ վայելող։

Կը հաւատայ սուրբ Հաղորդութեան հոգևոր խորհրդոյն և կը կատարէ հացով և գինիով, և կընդունի թէ հոգևորապէս է մարմին և արիւն կենարարին Յիսուսի, որն որ կտակեց յիշատակել հաւատացելոց մինչ ի միւսանգամ գալն։

Կընդունի և կը կարդայ Ծարդարէական գրուածներէն, Առաքելոց նամակներէն և սուրբ Աւետարանէն, և Դաւթի սաղմոսներէն, ունի ընտիր աղօթքներ, երգեր, Տէրունի և ապաշխարութեան շարականներ, կընդունի Նիկիական հանգանակը զոր կը կարդայ օրին և պատշաճին։

Կընդունի և սիրով կը պատուէ և կը կատարէ ինչ որ Ցրբազան մատեաններեր կը քարոզեն, որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ, կը պատուէ Տէրունի օրերը որ է Կիւրակէ նաև Տէրունական օրերն՝ ի յիշատակի սիրոյ և երախտեաց շնորհացն Աստուծոյ։

Կը յարգէ Քրիստոսի դիւցազուններն՝ և նոցին նկարներն իբրև հայելի և օրինակ՝ ի ցոյց զգալի տեսութեամբ յիշատակեալ կը մեծարէ, և կը տօնէ մաղթանօք «վասն» բառէն ուժ առնելով և Յայտ. Ե. 8 համարէն խրախուսուելով։

Ի՛աղօթէ հաւատով յուսով ննջեցելոց համար խընդրելով նոցա գթութիւն, Պօղոս Բ. Տիմօթ. Ա. 18 համարէն սորվելով։

Իւղով կ՚օծէ դրոշմի նշանակութեամբ իբրև միջոց Հոգւոյն շնորհացն, Քրիստոս յոյն բառին նշանակութեամբը է օծեալ. ի հնումն թագաւորք և քահանայք կ՚օծուէին իւղով, Դ. Թագ. Թ. 1-16։ Ի նորումն է պատուէր առաքելական, Յակ. Ե. 14։

Digitized by Google

Քահանայական ներողութիւնը կը պատուիրէ ապաշխարողաց և ճշմիւ դղջացելոց ըստ Տէրունական, բանի, Յովհ. Ի. 23։ Իսկ պսակը ու կարգը ի փրկութիւն՝ ոչ ամենեցունց պէտք կը հաւատի։

Ունի զարդեր, ձևեր, լաթեր, պահքեր, զորս կը գործածէ ի վայելչութիւն եկեղեցւոյ Աստուծոյ, ի մեծարանս փառացն Նորին արքութեան։

Ունի եպիսկոպոսներ, երէցներ, սարկաւագներ և դպիրներ։

Կընդունի նախկին երեք ժողովներն, կը պահէ հաւատքը, Յոյսը և Սէրը, որ է հիմն կատարելութեան Քրիստոնէական սուրբ կրօնի։

Կընդունի Քրիստոնէական սուրբ Եկեղեցին ի մի միութիւն և չը խորեր բնաւ մէկը փրկութեան կեդրոնէն, այլ համայն ճշմարիտ հաւատացելոց կայ փրկութիւն կը խոստովանի, և կը մաղթէ աղօթիւք վասն ամենայն հաւատացելոց երկնային սուրբ և երջանիկ երանութիւնը վայելելու յուսով։

Եւ կընդունի ու կը հաւատայ եկեղեցւոյն գլուխը է Քրիստոս, և Նորին հաւատացեալներն անդամք են ի Քրիստոս Յիսուս։

Ահա այս է Հայաստանեայց Եկեղեցւոյն պատկերը
Են որք մերժեն և կը հերքեն սոյն ճշմարիտ ըսուածքը,
Յօժարեցայ ճիշտ նկարել պէս հայելի եղածը
Օտարներու խօսուածքներով չըլլան երբէք ծուածը։
Կենաց բանին ով որ կուզէ անկեղծութեամբ հետևիլ
Ունի աստի վայելքներէ ամեն կերպիւ զրկուիլ,
Նա կը փութայ համակերպեալ ճիշտ պատկերիս նմանիլ
Պէս աչակերտ հալածանաց խաչն առած յարմարիլ։

Digitized by Google

ՊԱՏԿԵՐ

Յիշատակութեան եւ օրհնակութեան սուրբ Պատարագին

Որպէս Բանն Յիսուս մտեալ յարգանդ Կուսին առնու մարմին և մարմնաղդեստ երևի մարդկանց, նոյնպէս և քահանայն մտեալ ի պահարան զգենու հանգերձս, և անտի ելեալ արտաքս երևի մարդկանց։ «Աստուած մարմնով երևեցաւ» Ա. Տիմօթ. Գ. 16։

Ընծայիլն ի Տաճար ի գիրկս Սիմէոնի ծերունւոյ յաւուրս քառասնից ընդ ծնողացն, նոյն է քահանային ընդ պաշտօնելիւք դալն յատեան և ասելն «ի մէջ Տաճարիս» «ի Տաճար ածին զմանուկն Յիսուս» Ղուկ. Բ. 27։

Ելանելն ի լեառն այլակերպիլն Յիսուսի և առնլ լուսաւոր ծածկելն զառաքեալս, նոյն է ի խորան ելանելն քահանայի և ծածկելն վարագոյրին, Մատթ. ԺԷ. 1–9։

Իջանելն անտի և չրջիլն ի վերայ երկրի և ապա ի Գողգոթա, նոյն է քահանային իջանելն ի խորանէ չրջիլն ի մէջ մարդկանց և դարձեալ ելանելն ի խորան, Մատթ. Թ. 35. ԻԷ. 33։

Ընթերցումն Մարգարէական գրոց հնոց և նորոց, նոյն է վկայութիւն մարգարէից գուշակութեանց և Առաքելոցն քարոզութեանց, Եփես. Բ. 20։

Աւետումն հրեշտակաց ի ծննդեան և ի յարութեան, նոյն է ողջունիւ աւետումն սարկաւագին, Ղուկ. Բ. 10–14։ Մատթ. ԻԸ. 2–8։

Առէք կերէք այս է մարմինն իմ, արբէք ի սմանէ այս է արիւն իմ ասելն, է խորհուրդ վերնատան, նոյն է սպասաւորութիւն քահանային Մատթ. ԻԶ. 26–29։

Յիշատակութիւնք սրբոց և ննջեցելոցն, նոյն է իւղաթափ կնոջն ի յիշատակի, Մարկ. ԺԴ. 9։

Ասելն Հայր մեր, է Տէրունական պատուէր Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, Մատթ. Զ. 8–15։

Ասելն Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով, և Սրբութիւն Սրբոց, և բարձրացուցանելն ակներև ամենեցունց զՄարմին Տեառն, նոյն է ի խաչին բարձրանալն Գառին Աստուծոյ որ պատարագեալ զենաւ ի փրկութիւն և ի քաւութիւն աշխարհի, Յովհ. Ա. 29։

Ասելն ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, նոյն է պատուէր կենարարին Յիսուսի որ ասէ, Մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և Արիւն իմ ճշմարիտ ըմպելի, և զբանն զայն զոր ես խօսեցայ հոգի և կեանք է խակապէս, Յովհ. Զ. 56–64։

Մածկիլն խորանին, զկնի յարութեան է տեսութիւն սրբոց և անտեսութիւն ժողովրդեան, որ եկաց յաւուրս քառասուն ի վերայ երկրի, և ապա համբարձաւ, մինչդեռ հայէին նոքա վերացաւ և ամպ կալաւ զնա յաչաց նոցա, Գործ. Ա. 2–9։

Ի վերջոյ բացումն վարագուրին և իջանելն ի վայր քահանային խորանէ, ասելովն, որ օրհնեա զանասիկ և այն, է օրինակ գալստեան Փրկչին ի վախճանի աշխարհիս ի դատել և ի վարձատրել զարդարս և զմեղաւորս, Գործ. Ա. 11։ Մատթ. ԻԵ. 46։

Պատկեր Պատարագիս մեզ տան օրինակութիւնք [illegible]
Որով յայտնի և պարզ երևին տնօրինութիւնքն [illegible]

Հ.Ս.Խ.Հ. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.О.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՑ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՔ

	Հին կտակարանէ	Նորէն տես
Որդի Աստուծոյ բլլալը	Սաղմ. Բ 7	Ղուկ. Ա 32-35
Կնկան սերունդ բլլալը	Ծննդ. Գ 15	Գաղատ. Գ 4
Աբրահամին սերունդը բլլալը	Ծննդ. ԺԷ 7	Գաղատ. Գ 16
Իսահակին սերունդը բլլալը	Ծննդ. ԻԱ 12	Եբրայ. ԺԱ 17-19
Դաւիթին ցեղը բլլալը	Երեմ. ԻԳ 5	Հռովմ. Ա 3
Ժամանակին գալը	Դանիէլ. Թ 21-25	Ղուկ. Բ 1
Կոյսէ ծնանիլը	Եսայ. Է 14	Մատթ. Ա 18
Էմմանուէլ բսուիլը	Եսայ. Է 14	Մատթ. Ա 22-23
Բեթլէհէմին մէջ ծնիլը	Միքէ. Ե 2	Մատթ. Բ 1
Թագաւորաց երկրպագութիւնը	Սաղմ. ՀԲ 10	Մատթ. Բ 1-11
Բեթլէհէմի տղոց ջարդուիլը	Երեմ. ԼԱ 15	Մատթ. Բ 16-18
Եգիպտոսէն կանչուիլը	Ովս. ԺԱ 1	Մատթ. Բ 15
Մկրտչին նախագալը	Եսայ. Խ 3	Ղուկ. Ա 17
Սուրբ Հոգիէն օծուիլը	Սաղմ. Խե 7	Յովհ. Գ 34
Մելքիսեդեկեան նման Մարգարէ լինիլը	Բ. Օրինց. ԺԸ 15-18	Գործ. Գ 20-22
Մելքիսեդեկեան քհնայ. լինիլը	Սաղմ. ՃԺ 4	Եբրայ. Ե 5-6
Քարոզութիւն ընելը	Եսայ ԿԱ 1-2	Ղուկ. Գ 16-43
Գալիլեայէն սկսիլը	Եսայ Թ 1-2	Մատթ. Դ 12-23
Փառաւոր Երուսաղէմ մտնելը	Զաքար. Թ 9	Մատթ. ԻԱ 1-5
Տաճարը մտնելը	Մաղաք. Գ 1	Յովհ. Բ 13-16
Աղքատ բլլալը	Եսայ. ԾԳ 2	Մարկ. Զ 3
Հեզ, փառք չունենալը	Եսայ. ԽԲ 2	Մատթ. ԺԲ 16-19
Կարիքից և ցաւակից բլլալը	Եսայ. Խ 11	Եբրայ. Գ 15
Ճնդութիւն չունենալը	Եսայ. ԾԳ 9	Ա. Պետր. Բ 22
Նախանձաւոր բլլալը	Սաղմ. ԿԹ 9	Յովհ. Բ 17
Առակներով քարոզելը	Սաղմ. ՀԸ 2	Մատթ. ԺԳ 34-35
Հրաշքներ գործելը	Եսայ. ԼԵ 5-6	Յովհ. ԺԱ 47
Նախատինք կրելը	Սաղմ. ԻԲ 6	Հռովմ. ԺԵ 3
Եղբայրներէն մերժուիլը	Սաղմ. ԿԹ 8	Յովհ. Է 5
Գայթակղութեան քար բլլալը	Եսայ. Ը 14	Ա. Պետր. Բ 8
Հրեայներէն ատուիլը	Սաղմ. ԿԹ 4	Յովհ. ԺԵ 24-25
Իշխաններէ մերժուիլը	Սաղմ. ՃԺԸ 22	Յովհ. Է 48
Իր Բարեկամէն մատնուիլը	Սաղմ. ԻԱ 9	Յովհ. ԺԳ 18-21
Իր աշակերտները զինքը ձգելը	Զաքար. ԺԳ. 7	Մատթ. ԻԶ 31-56
Երեսուն արծաթի ծախուիլը	Զաքար. ԺԱ 12	Մատթ. ԻԶ 15
Բրուտին ագարակին գինը	Զաքար. ԺԱ 13	Մատթ. ԻԷ 7
Զարշաբաթը	Սաղմ. ԻԲ 14-15	Ղուկ. ԻԲ 42-44
Բարեշնորհքին համար	Եսայ. ԾԳ 4-12	Մատթ. Ի 28

Digitized by Google